


1158-
I. 4





Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 1

ՃԵՇԱՐԱԹ

1 ՅՈՒՆԿԱՐ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱՒԱՌԱՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ
Տարեկան 50 Ղր.	Տարեկան 54 Ղր.	Տարեկան 12 Յր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԿԱՂԱՆԴԻ ԲԱՑԱՌԻԿ ԹԻԻ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԱՆԱՑԻՍԷ ԵՒՏԷՐՊԷ (Գ. Ջառուհի) է	ՍԻՊԻԼԷ ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌԻԷ
ԱԼՓԱՍԼԱՆԷ	ԼԵՒՈՆ ՇԱԹՐԵԱՆԷ
ԲԱՆԱԳՈՂ ԼՈՌԻԹԻՆԵԱՆԷ	ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐԷ
ԵԴՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆԷ	ՅԱԿՈԲ ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆԷ
ԵՐՈՒԱՆԴ ՏԵՐ-ԱՆԴՐԷԱՍԵԱՆԷ	ՅՈՎՀԱՆՆԷՍ Յ. ԳԱԹՄԵՐԵԱՆԷ
ՋԱԻԱՆ ՄՈՑՐԵԱՆ (ՅՈՎԻ. Ազնաւորեան) է	ՎԱՀԱՆ ԹՕՇԻԿԵԱՆԷ
ԹԷՐԻԿԷ	ՏԻԳՐԱՆ ԳԱՍԱԳԵԱՆԷ
ԺԻՐԱՅՐ ՇԻՐԱԿԱՑԻԷ	ԳԱՍԻՄԷ
ԼԻԼԱ (Վահան Գափազեան) է	Օ. ԳԱՄԷԼԻԱՆԷ

Իրենց Լուսանկարներով

(Մարյան) مطبعه مى — باب على جاده مى ٣٨

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՍԱՐԵԱՆ

Կ. Պոլիս Գապր-Ալի Զառեհի քիւ 38



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԻՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՅԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

№ 1

ՇԱԲԱԹ

1 Յունուար 1905

ԱԶՆՈՒԱՇՈՒՐ
ՎԱՅԱՆ ԷՖԵՆՏԻ ՓԱՓԱԶԵԱՆ

Սիրելի պաշտօնակից,
Պատահաբար տեսայ
Տարեգլխոյ առ.թիւ. Ձեր հը-
րատարակելիք բացառիկ
թիւին փորձերը. Արդէն
գիտեի թէ տասներհինգ օրէ
ի վեր ի՛նչ աշխատութեան
մէջ էիք, այս թիւով գրա-
կան գեղեցիկ հաւաքածոյ
մը կազմելու համար:

Ձեր այս ձեռնարկը
կը համապատասխանէ իմ
ձգտումներուս եւ իղմե-
րուս: Միշտ սիրած եմ
գրականութիւնը եւ լաւա-
գոյն գրողները: Ուստի,
յանուն մամոյ զարգաց-
ման, կը խնդակցիմ Ձեզի
եւ կը մաղթեմ իոր երկար
տարիներ առիթը ունե-
նար աւան կգրական նը-
ռւերներով կաղընտելու
Ձեր ընթերցողները:

ՄԱՆՁՈՒՄԵՒ ԷՖԹ. ՀԱՅԱԹԵՐԹԻՆ
ԱՐՏՕՆԱՏԵՐԸ
ՅՈՎՀ. Յ. ԳԱՅՍԵՐԵԱՆ

27 Դեկտ. 1904

Կ. Պոլիս





ՍԻՊԻԼ

ՆԵՐՆԻՈՅԹՆԵՐ

Ամառուան մէջ անպէտք երբոր հանեն ջրուկ ,
երբոր նեղեն հոխոզնը շանքն ու փայլակ ,
Հա նդարս եղի . յորդ անձրեւներն են վաղանցուկ ,
Անպարպէն ետ , երկնիմ կ'ըլլայ չիճջ եւ յրսակ ,

Եւս ազնուկի մի' հաւատաւ :

Մըրիկէն վերջ , երբոր տեսնէ դուք ծոզն հանդարս ,
Ինչպէս հարսին այերանիւք ֆոզն քայիսակ ,
Անոր ներքեւ կոհակներ կան լարած քակարդ ,
Եւ կը դիզուին սեւ զայրուցներ կուսակ կուսակ ,

Դուք իր տեսնին մի' հաւատաւ :

Երբ նշտենին ծովառուան մէջ քանայ ծաղիկ ,
Երբ Յուլիսին ձիւնը տեղայ քանայակ քանայակ ,
Խաղ մըն է աղ , Կըմոյց մը լոյ , մի' սարսափի ,
Բընուրեան պէս , անփութիւն են մարդիկ հաւակ ,

Երեւոյթի մի' հաւատաւ :

Երբոր տեսնէ քառեպատիկ սիկին մ'ազնիւ ,
Որ , աւէն օր , ծամ կը վազէ եռանդով տա ,
Եռանդին տակ , ո՞վ գիտէ ի՞նչ ունի հաւիւ ,
Մարդոց պարկեռ երեւոյթին արժէք մի' տա ,

Եւ ձեւերու մի' հաւատաւ :

Երբ այլ ու կին պատմեն հրմայն իրենց սիրոյն ,
Թէ մէջերնին չունին երբեք վէն կամ կասակ ,
Թէ երկուքին կամըր մէկ է , հոգին ալ նայն .
Անտոս սեր կը պահուրքս իր շուքին տակ .

Դուք այդ սիրոյն մի' հաւատաւ :

Ա. ր մ'որ սեւով կը փաքքուի գըլուխն ի վար ,
Կըմոյց մտնէն ետոյ չ'ուզեր ալ քայլովան ,
Անկեղծ ցար միտ քաւուն է , չունի փողհար ,
Մունեցիկով չի քարոզուիր վիտեն անպատակ .

Դուք այդ առջին մի' հաւատաւ :

Երբ օրորդ մ'ուզէ համեռտ ձեզ երեւալ ,
Վար առնելով ակնարկները սեւ կամ խաւակ ,
Բիթերուն մէջ՝ արդեօք ի՞նչ կայ անակրկիտ ,
Աչքերն անմեղ կըման ձեզի նախ շիտակ ,

Այդ կերպերուն մի' հաւատաւ :

Ով որ շատ սուր կը ձեւանայ մեղին հանդէպ ,
Ով որ աննեղ , անհէն մարդու կ'առնէ դիմակ ,
Վախցէ՛ք անկէ . ծաղկին ներքեւ քոյն կայ քոսէպ ,
Փայլուն նիւթերն ոսկի չեն միտ զոս եւ յրսակ :

Ամեն խօսքի մի' հաւատաւ :



ՀՐԱՆՑ ԱՍԵՏՈՐ

ՄԵՂՈՒՆ Յ. ՍՐՎԱՃԵԱՆԻ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐՈՎ

Գրեթէ կէս դար անցած է այն օրէն ի վեր ուր առաջին Հայ դաւեչտաթերթը դուրս եկաւ Մամուլի տակէն Կ. Պոլսոյ մէջ : 1856ին էր : այդ տարին Կ. Պոլսոյ Հայերը եռամիսսով կը սկսէին թատերական խումբ կազմել, ներկայացումներ տալ Սրապիոն Հէքիմեանի նախաձեռնութեամբ : Մոյիէրի կատակերգութիւնները կը թարգմանուէին և կը ներկայացուէին . հանրային զուարճութեանց ճաշակը կը սկսէր տարածուիլ : 1856 Հոկտեմբեր 25ին կը հրատարակուէր «*Զաւարճախօ*» կատակաբան թերթը, որուն հրատարակութիւնն ալ իրական կատակ մը եղաւ, քանի որ այդ դաւեչտաթերթը երրորդ թիւէն զրամական պատճառաւ դադրեցաւ : Այդ տարւոյն վերջերքն էր որ լոյս տեսաւ, Բարիզի մէջ, Բուրձնէ-լ-Բլանշ Բնօշի տնարակը, որուն հեղինակն էր Թ. Կըկուիկեան . այդ զիմակին ներքեւ կը ծածկուէր ժամանակին ամէնէն մեծ հայ գրագէտը, Խաչատուր Մխաբեան, որուն երգիծական այդ համառօտ գրուածքը կ'անդրադարձնէ հաւատարիմ կերպով ժամանակին ժողովրդական լեզուն ու ոգին, զուարթախոհ հեղուրթեամբ համեմուած :

Սակայն Զաւարճախօն և Բուրձնէ-լ-Բլանշն առաջ, 1856 Սեպտեմբերի 15ին սկսաւ հրա-

տարակուիլ Յարութիւն Սըվաճեանի Մեղուն, որ ոչ միայն անդրանիկ դաւեչտաթերթը եղած է Հայոց, այլ և ամէնէն երկարակեացը : Խմբագիրը քանրհինգ տարու, երկայնահասակ, նիհար և ջղուտ, մօրուսաւոր երիտասարդ մըն էր, կեանքով, հաւատքով, հրապրքով լեցուն, ոգորող միտք, յանդուգն և անվեհեր : Այս համարձակախօս երիտասարդը աղքատի տղայ էր, և ընկերութեան յետին խաւերուն մէջ ապրած էր իր մանկութեան ատեն . ապա, բախտը ուղած էր որ աւելի բարձր միջավայրի մը մէջ դաստիարակուի : Ետընը Պօղոս աղայի տան մէջ, անոր զաւակներուն և ուրիշ քանի մը հարուստի զաւակներու հետ աշակերտելով Խաչատուր Մխաբեանի և Խաչատուր Պարտիզյանի, որոնց առաջինը գրականութեան և երկրորդը ուսողութեան վարպետներ էին : Սըվաճեանի միտքը փթթեր էր այդ ջերմին մէջ : Յետոյ, կեանքի մէջ ալ, միշտ հզօր աշակցութիւնը վայելեց իր պատանեկութեան ազնուապետական ընկերներուն, որոնցմէ մէկը մանաւանդ Մեղուն ամէնէն գործօն աշխատակիցը եղաւ, յաճախ անստուրագիր հրատարակելով առաջնորդող յօդուածներ, կարող հրապարակագրի արժանի գրական փառաւոր էջեր :

Ժողովուրդի այս վաւուռուն զաւակն էր անա որ նախաձեռնութիւնը ունեցած էր առաջին հայ դաւեչտաթերթին : Իր յառաջաբանը կորովի, անկեղծ հոգիի մը արձագանքը կը բերէր : Սըվաճեան կը յայտարարէր հոն թէ իր ջանքը տիրի ըլլայ որ «*Ամէն մարդ իր պակասութիւնները ձեռքովը չօշափէ և իր բրած անխելքութիւններուն վրայ ինք ալ խնդայ*» :

Այս ծրագրով կը նետուէր ասպարէզ, և առաջին թիւէն իսկ, ուր կը գտնէք մանաւանդ լուրջ յօդուածներ և թարգմանութիւններ, կը հրատարակէր երգիծական յօդուած մը Օկտոբր Լիլէ վերնագրով, որ 1856ին հայ դասակարգին դերձակն է եղեր : Այդ երգիծանքին մէջ Մեղուն խմբագիրը կը պատկերայնէր ասէր փերիւեաիկ երիտասարդ մը, զալարուած մազերով, թուշին տակէն դուրս ցցուած վիզով, երկնաւանդ փողկապով, կանաչ բաճկոնով, ճերմակ նեղ սափատով և լայնաթիւ լօղիկով : Պատկերը բուական

յաջող է, և վրձինի այդ անդրանիկ հարուածներէն իսկ ի յայտ կուգայ երգիծական ճարտար նկարիչը, որ գիտէ դուրս ցայտեցնել մարդոց ծաղրելի կողմերը: Արդուզարդի այս սիրահարը կը խոստովանի թէ ամսական չորս հարիւր զրուշ կը շահի, բայց բան բանելով ասորով իր մօր օգնելու համար ամսական երեսուն զրուշ միայն յատկացուցած է . . . : Իր երկրորդ երգիծական յօդուածը կը ներկայացնէ մեզ հարուստ երիտասարդի մը սենեակը, և այդ առթիւ ալ սուր խայթումներ ունի Մեղան, մասնաւոր ընկելով մեր ընտանեկան տգեղ բարքերը: Հետզհետէ կը հրատարակէ յօդուածներ, ուր ռամկական լեզուն իր բոլոր պատկերոտ բացատրութիւններուն մէջ կը գործածէ ջլղիկի նրբացումներով. «Շնորհաւորի պտտող մը», «Մեղուն քնիչները», որուն մէջ չորս բարեկամներ Մեղան վրայ խօսելով անոր թերութիւնները մասնաւոր զ'ընեն ու կը քննադատեն դայն:

1859 ի սկիզբէն Մեղան զիրքը կը փոխուի, և կը հրատարակուի իր տասնօրեայ հանդէս, Հանրագիտելի արդի գիրքով, 8 երես միայն. այդ 8 երեսներուն գինն է 3 զրուշ: Կը տեսնէք որ կէս դար առաջ վեցյաւատիկ աւելի սուղ էին մեր հանդէսները, թէև պարունակութեամբ հիմակուաններէն շատ աւելի չէին արժեր: 1859 Յունուար 31 ի երրորդ թիւը կարեւոր հանգրուան մըն է Մեղանի կեանքին մէջ: Այդ թիւին մէջ է որ Սըվաճեան սկսած է իր երգիծական գրութեան քննարկուն ամէնէն նշանաւորը, Մանկապէսի հարմէի, յօդուածներու շարք մը որ ալմուկ հանած է իր ատենը և Մեղանի բախար շինած: Ու դարձեալ այդ թիւին մէջ է որ Սըվաճեան վերջնապէս կը ճշդէ իր հրատարակած պարբերականին դաւնշտութիւն հանգամանքը: Ըստ իրեն, ամենեւին գիրք կամ լրագիր կամ տետրակ ձեռք չառնող անձը համ չ'առնէր բարոյական ճանաչողութիւն, բանասիրական գիտելիքներէն, ուսումնական տեղեկութիւններէն, մինչ ախորժով կը կարդայ «գուարճալի գրութեաները և զբօսալի լուրերը»: Զաւեշտութիւնը պիտի ծառայէ ուրեմն ընթերցասիրութիւն տարածել ժողովուրդին մէջ: Ասկէ զատ, երգիծանքն ու ծաղրանքը ժողովուր-

դին բարքերը պիտի ուղղեն, հեգնութեամբ ծաղկելով մասնաւորներու վրայ տեսնուած պակասութիւնները, նախապաշարունակները և անվայել սովորութիւնները: «Երբ մարդուն պակասութիւնը զուարճալի կերպով երեւին տրուի, կը գրէ Սըվաճեան, խնդալով կ'ամչնայ իր ըրածէն ու երկրորդ անգամ նոյն յանցանքով բռնըլելու կը զգուշանայ՝ ուրիշին ծիծաղը իր վրայ շարժելէ վախնալով»: Մեղան, որ մանաւանդ ռամկին համար կը դուրս, պէտք է գործածէ այնպիսի լեզու մը զոր ռամիկը հասկնայ, որ իր ամէն օրուան խօսած լեզուն ըլլայ: Այս ծրարագրին ահա պիտի հետեւի Սըվաճեան:

Այս ուղղութեամբ Մեղան կը սկսի տարածուիլ ժողովուրդին մէջ: Լուրջ խնդիրներու վրայ ալ կարեւոր յօդուածներ կը գրուին: Սըվաճեան կը պատկանէր հրապարակագիրներու այն դպրոցին որուն ղեկը կը ներկայանան Նազարեան իր Հիւսիսայնով և Ստեփան Ոսկանեան իր Արեւելով ու Արեւմուտով: Մեղան խմբագիրն ալ զեղծումները կը չափազանցէր, ամէն թերութեան խոշորացոյցով կը նայէր, և պզտիկ վէրքերը մահացու խոցերու ձեւին տակ կը ներկայանային. կծու լեզու մը ունէր, յաճախ թուաւոր, անգութ իսկ, երբ ուղէր աղգեցութիւն գործել. իր քննադատութիւնները Հիւսիսայնոցի Հոգաբարձուներուն դէմ, աղջկանց օտար վարժարաններ զաւակ զրկող ծնողներուն դէմ, ձրի լրագիր կարգադրողներուն դէմ, իր հատու երգիծանքները զորս կ'ուղղէր մերթ Տէրոյնցին, մերթ Միսաքեանին, մերթ Ոսկանեանին, մերթ Մէճմուլայի խմբագիր վարդան պէյին, ասոնք ամէնքը երեսան կը բերէին պայքարի մարդը, որ իր կարծիքներուն փարած է, ինչպէս կրօնամոլը իր հաւատքին, որ չի քաշուիր հարուածելէ նոյն իսկ իր ուսուցիչը կամ բարեկամը երբ անիկա հանրային խնդրի մը մէջ իրմէ տարբեր կարծիք ունի, և այնքան արիւթեամբ ու խանդով կը պարսաւէ իր հակառակորդները որքան այժմ ու խանդաղատանքով գովեստ կը հիւսէ անոնց որ գրաւած են իր համակրանքն ու վստահութիւնը:

Մեղան գլխաւոր նորութիւնը իր վիմազիր ծաղրապատկերներն էին, որոնք 1859էն

սկսեալ գրեթէ ամէն թիւի մէջ կ'երեւային Այդ վիմադրութեանց ամենամեծ մասին տակ ստորագրած է Յարութիւն Հէքիմեան և մէկ քանիներուն տակ ալ Դրիգոր Սէմիգեան : Յարութիւն Հէքիմեան ճշմարիտ արուեստագէտ մըն է : և իր յաջող պատկերները կարեւոր տեղ մը կ'ուտան իրեն ժԹ. դարու հայ արուեստին (պատմութեան մէջ : Տարակոյս չկայ որ այդ պատկերները Սըվաճեանի թելագրութեանց վրայ պատրաստուած են, որովհետեւ անոնք կը ներկայացնեն մեզ սրամիտ ակնարկութիւններ ժամանակին ընտանեկան շրջանակի իրողութեանց և սովորութեանց : Մեղաւ առաջին խայթումները կանոնաց արդուզարդին կ'ուզուին : Մաշտոցին դէմ, որ ժամանակին նորոյթն էր, հրատարակած է բազմաթիւ ծաղրապատկերներ. անոնց մէկը կը ներկայացնէ սենեակի մը մէջ նստած երեք կիներ և էրիկ մարդ մը որ ոտքի վրայ կեցած է, որովհետեւ . . . սենեակին մէջ տեղ չէ մնացեր : Ուրիշ պատկեր մը կը ներկայացնէ մաշտոց հագած կին մը. անոր շուրջը հաւաքուած են ուրիշ պարզ հագուստով կիներ, որոնց ոտքերը կը տաքնան իբր թէ . . . Խնէի մը մէջ ըլլային : Վերջապէս ուրիշ ծաղրապատկերի մը մէջ Սըվաճեան կը ներկայացնէ երեք կիներ երկար չրջադիտաներով : Վանդի սպասաւոր մը կեցած է անոնց մօտ և կ'ըսէ. « Տիկիններ, կաղէք, զեպաններ քիչըմ ջրոտեմ էնանկ ա իյեցէք : »

Ուրիշ գեղեցիկ ծաղրապատկեր մը կը յարձակի թղթախաղին դէմ, որ կ'երեւայ թէ այն տառններն ալ մօտ գտած էր ընտանեկան յորիկերու տակ : Թղթախաղի սեղանին շուրջ հաւաքուած են կիներ և տղեր որոնք կը խաղան մատմիտի : Կիներէն մէկուն քովիկը պղտիկ աղջիկ մը կեցած անոր քղանցքէն կը քաշէ, և կ'ըսէ.

— Տուտո՛ւ, փոքր անօթի է, հայտէ կ'հաց տուր :

— Աման, աղջիկս, հիմայ զնա՛ քովի տունէն քիչ մը հաց ուղէ տէ կեր, թող տուր որ սա մէկ երկու ձեռքն ալ աւանդ :

1861 թ թիւերէն մէկուն մէջ ալ Սըվաճեան ծաղրապատկերով մը կը ներկայացնէ իր մէկ հակառակորդը, Արեւելեան դարի խմբագիրը՝ Գ. Տէյրիմը և ան, որ իրեն համար

սկզբունք չունեցող հրապարակագիր մըն է : պատկերին վրայ կ'երեւայ հովով դարձող ջաղացք մը որուն տակ նիհար մարդ մը ընկողմանած է՝ ոտքը ոտքին վրայ դրած : Էջին տակ կը կարդանք. « Ես տէլիւմէնճի եմ, հովը ո՛ր կողմէն փչէ նէ՛ Եկէլնէքս ան կողմը կը դարձնեմ, հովն ալ կարելուն պէս Եկէլնէքս ջուրը կ'իջեցնեմ » :

Մեղաւ հրապարակներէն մէկը եղած է Մեղաւելան : Ասիկա Մէֆրիթօֆէլէսի պէս մըտացածին էակ մըն է, տեսակ մը խաղիկ որ չափ մը լուրեր և տեղեկութիւններ կը բերէ Սըվաճեանի : Մէլուխէյան կը ճանչնայ բոլոր անձերն ու իրերը, խորունկ հետաքրքրութիւն մը ունի ամէն բան իմանալու և կ'ուզէ որ իր հեգնական դատումները հրատարակուին, յանցաւորները խարաղանուին հրապարակաւ : Եթէ պէտք տեսնէ, օգին մէջ կը բարձրանայ, և նոյն իսկ դեռնին տակ կ'իջնէ, խուրդներուն մէջ կը խառնուի, որդերն ու մըլիւններն իսկ չ'արհամարհեր կեանքը ուսումնասիրելու համար : Մեղաւելան ընտանեկաններու մէջ կը մանէ, ներկայ կը գտնուի էրիկ կնկան վէճերու, կամ ուրիշ ընտանեկան տեսարաններու ուրոնք ապա կը պատմուին Մեղաւի մէջ : Ան է որ եկեղեցականներուն խիղճը կը պրկուէ, անոնց թաքուն մտածումները քողաղիթ կընէ, անոնց փառասիրական ձգտումները պարտաւելով : Վերջապէս ուր զեղծում մը կայ մատնանիշ ընելիք, Մէլուխէյան հոն է, հեգնող փայտը չրթունքին վրայ, ծաղրանքի ուղքներ արձակելու պատրաստ :

Երուսաղէմի պատրիարքական բնորոշութեան վէճերէն ետք Սըվաճեան 1861 Սեպտեմբերի մէջ իւլյոյ կ'ընծայէ տետրակ մը որուն անունն է Մէլուխէյա : Մէլուխէյան կը զրկէ իր ընթերցողներուն « Մեղուն առայժմ փեթակին մէջ ըլլալուն համար : » Այդ գրուածքը Սահակ վարդապետին դէմ է, Երուսաղէմի միաբան այն Սահակ վարդապետին որ կ'ուզէր յաջորդել Երուսաղէմի վաթսուհայր Պատրիարքին, և որուն բանեցուցած մեքենայութիւնները մեծ դեր ունեցած էին « ներսէն-դուրսէն » ի պայքարներուն մէջ : Մէլուխէյան կը պարզէ ժողովուրդին առջև Սահակ վարդապետի մեծամօլ խորհուրդները և դորձ ա ծ ա ծ ր ի

հնարքները: Մենախօսութեան մը մէջ, Սահակ վարդապետ կը գոչէ .

Ոսկի՛, ոսկի՛

Քեզ աշխարհի տէր գըտի

Քեզմով ամէն մարդ բերի

Բոլորաբքս չարեցի :

Մէլլախան այն գրուածներէն է որոնք իրենց ժամանակին բաւական ազմուկ հանած են: Այսօր թէեւ շատ րան կորսնցուցած է իր այժմութենէն և շահեկանութենէն, սակայն դարձեալ հետաքրքրութեամբ կրնայ կարգացուիլ, իբր գեղեցիկ նմոյշ մը Սըվաճեանի երգիծական տաղանդին :

Յարութիւն Սըվաճեան թողուց Մէլլախան խմբագրութիւնը 1863ի սկիզբը և իրեն յաջորդեցին հետզհետէ Յովհաննէս Հովուեանց, Աբրահամ Մուրատեան և Արմենակ Հայկունի: 1863ին դադարեցաւ Մէլլախան և Սըվաճեան վերստին սկսաւ հրատարակել դայն 1870 Սեպտեմբերին, միաժառ զիրքով, չաբաթը երկու անգամ, և շարունակեց մինչև 1872 Նոյեմբեր, այդ թուականին հեռանալով

խմբագրութենէ և իր տեղը տալով Յակոբ Պարոնեանին, որուն նորածագ մեծ տաղանդին առջեւ իբր սկսած էր ազատանալ, երկու տարի ետքն ալ բոլորովին կը հեռանար աշխարհէ՝ թոքախտէ մեռնելով Պարոնեանի ողէս, և և թաղուելով Խասգիւղի գերեզմանատան մէջ:

Այս յօդուածին շրջանակէն դուրս էր ներկայացնել վիպագիր ու հրատարակագիր Սըվաճեանը. մենք հոս ուզեցինք երգիծաբանը ճանչցնել և ոչ թէ գրագէտը, որ ուշ չադրաւ է զանազան տեսակէտներով: Եթէ գրական զեղագիտութեան տեսակէտով մեծ տեղ մը չի գրաւեր, սակայն աներկբայ իբր զաւարարի մարդ, իբր անկեղծ գրող, և իբր սկզբունքի ու նկարագրի տէր խմբագիր, Սըվաճեան կարեւոր տեղ մը գրաւած է իր ժամանակին գրական տարեգրութեանց մէջ, և կարծէ՛ որ ընդարձակ ուսումնասիրութիւն մը իր կեանքին ու գործերուն վրայ՝ աւելի մօտէն ճանչցնէ մեզ Մէլլախան վաղամեռիկ ու միանգամայն վաղամուտաց տաղանդաւոր խմբագիրը:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՇԸ

Մահուան մտածումն, ա՛հ, բունն է մահեհն,
Աւելի՛ անբաւ, աւելի՛ խոժոռ,
Ինչպէս ամբաստանս ան՝ որ դանդաղորէն
Փոքորիկի մը խոկայ ֆրեսաբոր . . . :

Կարծես Մ'սածումն, հո՛ն կը տեսնէ դեռ,
Դիակիկն դեմքին վրայ մտաբանի .
Ի՛նչպէս փոքորիկին հուսկ աւերեհն վեր՝
Դեռ կը մխայ sop ամբաստան մը չազնայ . . . :

Մ'սածումներու աշխարհը ի՛նչ փոքր,
Երբ չըլլար Մահ, — Լըռութիւն դաժա՛ն —
Քնարիկն թելերէն կը ծնէ՛ր Կապոյտ
Երբ Կեանքն ըլլար յաւիտեանական :

Եւ Սերն աչքաւ մը չի՛ պիտի ըլլար
Երբ անհունիկն ցոյ՛ն ըլլար մեր անձ .
Չի՛ պիտի յո՛ւր բանաստեղծիկն շար ,
Երբ իր Տենչիկն պէս ըլլար անասնց :

Անտարքերուքեան մե՛ծ կեդրոն՝ մեր Եւ
Չի՛ պիտի վանէր Խոհն անկողնայեղ ,
Եւ չի՛ պիտի մեռնէ շնչիկն ըզմեղ՝
Դաշկանար, քափուր հորիզոնիկն տեղ :

ԵՐ. ԳՕԼԱՆՃԵԱՆ



ՆԻՏԵՐՊԷ
(Գ. ՋԱՐՈՒՇԻ)

ՋԻՈՒՆ ՈՂԵԽԱՐԸ

Առաւօտուն կանուխ մտնելով երեւոյթի մէջ հեղձութիւն ձգեցի. ախտահար մեզ անոր ողբերգի զարեանոս շունչը եւ վերելքով ծածկուած մարմինը ժանտալից մրցողութեամբ մը լեցուցած էին, եւ բոլոր միւս ձիւերը՝ անուշ, սրտազգին նայուածք մը իրենց խոտոր ու փայլուն աչքերուն մէջ, կարծես հասկցած էին այդ տառապալիս քնկերոջ Ֆիգիական ցաւերը: Առաւօտուն կանուխ անոր տեղը, անգուր ու վայրենի մարդ մը, ալ իր բոլոր յոյսերը, իր վերջին միակ յոյսն իսկ փառասած էր այդ ձիւին առողջութեան մասին, ու մտնելով դուռն անցած էր ախտահար: Ու խորհիլ քի ուրան ապերախ կ'ըլլան մարդիկ, քերեւս ամբողջ երկար տարիներ, բոլոր իր ուժը, բոլոր իր կարողութիւնները բաժնած էր իր տիրոջ օգտակար ըլլալու համար անկախ խոտոր փառապանքով բռնել կրած տարած էր անիկա Բրիգիթայի փառն ու բարձր զանգիւղներէն. առտուն արեւոյտէն մինչեւ իրիկուան վերջին պահը, ուժասպառ ու գլխահակ, հեւալով ու խռնչելով, իր տիրոջ կարեւոր ու ծանր յոգնութիւնները ճշմարտութեամբ քրտնէր սեւակ մը անասնա-

կան համակերպութեամբ. դեռ իր երիտասարդ օրերուն, աւելի առողջ կորովով մը, այդ ծանր բռնութեան վրայ քերեւս կրած տարած ըլլար իր տեղը ալ միասին, եւ այնչափ ծառայութիւններէն վերջ, որչափ անգուր կ'ըլլան երբեմն մարդիկ, իր ողբերգի խառնակութեամբ, մտնելով, իր վերջին վարձատրութիւն իր տեղը բռնեցին հաւուածներով վար գործած էր երբեմնի ճշմարտ, բայց այսօրուան այդ անոյժ ու տառապանք, գործած էր խոտոր զանգիւղներէն, եւ առաւօտուն կանուխ, գրեթէ արեւոյտէն առաջին ցոլերուն հետ արեւներ էին, վարը այդ խոտոր մարմնոյն տապալումէն, գրեթէ պատահականաւ առջեւ: Մեծ ու ջղաւարտուն խռնչիւն մ'ընկերացած էր այդ տապալումին, ու երկիւղալից ոտնուով մը ցատկեր էին անկողինէն պատահականաւ առջեւ: Ջառնվարէն անդին տեսներ տեսներ էին միմեկ մարդուն, որ կը փախէր ռեւազորի մը բնագոյն, ու վարը ձիւն ողբերգի տեսարանով:

Որչափ տարբեր են գուրի ու արգահատանքի զգացումները մարդուն մէջ. ուրիշ մը մինչ իր տան շունին ու կատունին կապուած կը գգայ ինքզինքն անուշ գոգոցման կապերով, մինչդեռ ամեն գուրգուրանքով ու սեւով կը շրջապահ անոնց առողջութիւնը ու կեանքը, եւ վրասից արգահատանքով կը կապուի անոնց ողբերգին, ուրիշներ անդին վայրենիներու պէս կը չարչարեն, կը խառնաւորեն խոտոր եւ օգտակար կենդանիներու ողբերգի, որովհետեւ ալ տառապանք մը բռն մը միայն մնացած է իրենց համար անոնց կեանքէն ու մարմնէն:

Ու կը խորհիմ, հեղձութեամբ ձիւ, որչափ մարդիկներ կան ծնած էր նախատգրի մէջ, որչափ անձնուր, օգտակար ու ազնիւ մարդիկներ, որ ալիքս ու սգեղ ըլլալուն համար, միշտ դատապարտուած են ապրելու սգեղ ու վարձկան ձիւներու պէս օտարներու ծառայութեան ու օգնութեան մէջ, եւ հակառակ իրենց ինքնամոռացումին, անարգուած եւ չարուած մնացած են միշտ, ու իրենց ողբերգի խառնակութեամբ ու մտնելով եւ այս հեղձութեան ողբերգին պէս, մոռցուած ու ամալի վայրեր:

Եւ ալ իմ կազմուածքիս համար անհա-

զղային զբաղում մը ամբողջ օրում. քա-
րեռն բաղնիքում վերեն ամբողջ արիւնի
հետքերն ձգած են գետնին վրայ, եւ հեկ կեն-
դանին կը տալիսին անդադար. քիչ մը քր-
ջած է անոր ամբողջ մարմինը, եւ անոր
դիմին շուրջ. աչքերուն եւ կազմուած խո-
նարակները, լալու եւ արցունքի կե-
տարանի մը մէջ դրած են զինքը: Քանի
մը գործաւոր մարդիկ կ'անցնին ու կը ճան-
նան ձին, կ'անիծեն ու կ'անպատուեն անոր
սիրոյ անունը. յայտնի է քե մանր մօտ է, ու
մինչեւ իրիկուն իր գարշահոտ մարմինը պի-
տի ապակաւէ մը մօտը, փայտով մը պրզ-
տիկ զգուշացնող շոյանքներ կը դնեն անոր
մարմնոյն վրայ, կը շփեն կոնակը, որպէս
զի ոտի էլէ, ու ճանին վրայ իրենց հետ եւ
յանձնեն բազմապէս տեսան. սակայն ձին չկը-
նար ամփոփել իր ուժերը, կը շարժէ զուլար,
ջանք մը կ'ընէ որպէսզի կանգնի ոտներուն
վրայ, բայց արդէն սպառած է կեանքն
անոնց մէջէն, ու ետէի ոտները փայտի պէս
կը ճկուի: Մարդիկը յուսահատած կ'անց-
նին կ'երթան, եւ կը ձգեն աչքիս առջեւ
չարչարանքի եւ ողբարի պատկեր: Մահ-
ուան ու կեանքի կոխը վերջին անգամ մը
եւ կը փոքորիկ հեկ անասունին մէջ. գե-
րեւակաւ ուժով մը կը կանգնի ոտներուն վր-
այ, ու զինով մարդու մը պէս հազիւ կը-
նայ բռնել խոռո մարմնոյն զանգուածը իր
ուժաստիւն ու գրեթէ մեռած սրունքներուն
վրայ: Եւ կը ծաւալի աչին ու ձախին, կը
ստատի մեռելական խոնջիւնը կոկորդին
մէջ, ինչպէս ինչ ալ վերջին ջանք մը կ'ընէ,
կը մօտեւայ մեռ ճան պատին, կը ծաւալի իր
հսկայ մարմինը, կը զարնուի, կը զարնուի,
երեւ անգամ. չորս անգամ, ցաւագին խոռն-
դիւնը կոկորդին մէջ. ակունքներն իրարու
մէջ անցած, աչքերուն փայլը անհետացած,
ու գրեթէ կիսափակ: Կեանքի սերը, մեռնիլ
չուզելու փափակը վերջին անգամ մը քե-
րեւս կը փոքորիկ իր մէջ, ու կուգայ կը
զարնուի պատին, կը դառնայ գլխի վրայ, ու-
րեւ օդին մէջ, ու վերջին շունչը խոյս կու-
տայ փակ ակունքներուն մէջէն:

Անոր փայտացած մարմինը հիմա աչքիս
առջեւն է, արտաքին ազդեցութիւնները կը
հպին իր մարմնոյն, բայց ոչինչ կը զգայ այլ

եւ. հարիւրաւոր միջատներ կ'իջնեն ու
կեղեւն անոր վերեւուն վրայ, շունք կու-
գան կը խմբուին անոր դիակին շուրջ, կը
հաչեն ու կը հոտուրան, կը զգան քե մե-
ռած է, բայց չեն համարձակիր յօռնել ա-
նոր անունը մարմինը: Կը խորհիմ քե իր
այս անշարժ ու անունը վիճակին մէջն է
իր երջանկութիւնը:

Մինչեւ իրիկուն անգուստ հետաքրքու-
րիւնով քանի անգամներ մօտեցեր էի պա-
տահանին, զիտելու համար այդ մեռելու-
րեւան պատկերը. արեւամուտէն վերջ կասա-
րեցին անոր յուղարկաւորութիւնը: Երկու
բեռնակիրներ, չուան մը կապեցին անոր
ոտներուն եւ քաշեցին մեծ զուռի վրէն ա-
նոր փայտացած ու ծանր մարմինը. քանի մը
հետաքրքիր տղայ հետեւեցան իրենց, եւ իրեւ
յուղարկաւոր շունքը շրջապատեցին հեկ ա-
նասունին դիակը:

Չեմ գիտեր քե ո՞ւր կ'իջնէ ծագած էր բոլոր
այդ գուրի ու ցաւի զգայնութիւնը ամբողջ
եւրեւան մէջ. դժբախտ անասուններու կե-
ղեւում ու տառապած կեանքն էր որ այդ-
չափ ուժգին ցնցում մը կուտար բոլոր այն
կեանքին համար ալ, որ քերեւս շատ հուշագ
ու գրեթէ անզգայօրէն անցուցած էի անա-
սուններուն մասին, բաղդատմամբ այսօր-
ուան հետաքրքիր հետախուզութեան, եւ որ
ինձի կը հարկադրէր խորհիլ մարդոց պէս
անասուններուն ալ վրայ: Եւ յետոյ ինչ զար-
մանալի ուշաքերութեամբ մը յիշեցի, ձիուն
յուղարկաւորութեան ատեն, առնան իրիկուն
մը, ուր վերջապիտի ցոլեւն իսկ անհետա-
լու վրայ էին, Բերայի մեծ փողոցի յոյսերը
շատեցնելով անոնց ինչ արդէն, եւ քանի մը
պանդուխտներ կը հետեւէին փայտե դաղազի
մը, զոր երկու բեռնակիրներ քաշելով կը
տանէին, գրեթէ կը վազեցնէին: Տղայական
վախով մը սոսկալի էի կ'սրծելով տեսնել
կիսափակ կ'ափարիչէն ոսկորացած դիակը.
այդ օրը չէի կրցած սահմանել այդ հեկ մե-
ռելին կեանքին ու մահուան պարագաները,
բայց այսօր ո՞րքան բնականօրէն մեռաւոր-
ութիւն մը կը զգնեմ այդ դժբախտ մեռելին
եւ հեկ ձիուն կեանքին, ողբարիւն եւ յու-
ղարկաւորութեան պարագաներուն մէջ:

ՏԱԺԱՐԵՆՆ ՄԵՋ

Շրդարեներու մէջ աղջիկն անպատում
Վրժով խոնարհած հակասը սրտում,
Հոն՝ սանարին մէջ կեցած է լլուին,
Զորս կողմը լոյսեր, ջահեր կը վառին:

Բուրվառներու մուխն անօտ ամպի պէս
Նուրբ վէժվէտումներ կը կազմէ պէս պէս.
Քերովքներու մրմունջ հեռագին
Մեղեդիք կ'երգեն դրպիրներն անդին:

Ճառագայթ մը շեղ մեծ լուսանցոյցէն
Ներս թափանցելով՝ սանդուխ հրեղէն,
Կը սանի աղօթք ու խունկ համապիւռ
Դէպ ծոցն Ա.բարչին, սուրբ սիրոյ աղբիր:

Շրդարեներու մէջ աղջիկն անսարքեր,
Ամբօխ մը զուարթ չորս դին սարուքեր,
Սեւ բիբերն աղուոր գետին սեւեռած,
Անշարժ է իբրեւ արձան մ'անզգած:

Զեն շեսներ խորանն աչքերն իր աղօս,
Զի լըսեր սաղերն, ոսկերն ալ կթոս
Մեռափէ գորգին վրայ կը սառնին,
Շըրքունքներն քննոյժ շենդահար կ'այրին:

Դամբան մ'է՛ սանարն այդ աղջկան համար,
Ամէն կողմ զազիր կըմախք անհամար,
Հարսնետոբներն ալ դահին են բոլոր,
Մեռելի ողբեր՝ երգերն հեռօրօր:

Սեւ դագաղ մը կայ իր ոսկերուն սակ,
Պրզփիկ դագաղ մը, պարզ ու անխանդակ,
Որուն մէջ փաթած ներմակ վարդերով
Թաղած է սրտիկն ամբողջ սէր գորով:

Ու ցընորասանջ ցաւերով յետին
Երբ կ'զգայ հակփ մ'հպումն իր հակփն,
Իր ձեռքը սեղմող կոշ մասներուն վրայ
Արին-արցունքի կայլակ մը կ'իյնայ:

ՈՍԿԻ ԽՆՁՈՐ



Սպասուհի մակդիրը բացարձակ մեղանշում մը պիտի ըլլար Սուրբիկի հմայիչ գեղեցկութեան դէմ : Անիկա մեր սովորաբար ճանչցած կլորիկ թունտիկ սպասուհիներէն չէր, որոնք իրենց կարմիր երեսն ու մսեղ կաղմը կը յուշադրեն Բերայի մայթերուն ու հանրային պարտէզներու հովանաւորներուն տակ : Աւելի՛ պարզօրէն իրողոյսը վայելուչ էր այս աղջկան՝ եթէ ստանկ պաշտօն մը գոյութիւն ունենար անոր ապրած միջավայրին մէջ :

Սուրբիկի հետ՝ մեր ընտանիքին ծանօթութիւնը խիստ բացառիկ առիթով մը տեսիլ ունեցաւ : մայրը՝ առտու մը զայն մեր տունը բերաւ ու տանտիրուհիին հետ առանձնանալով, արտասուելից աչքով պատմեց թէ, աղքատ որբեւարի մըն էր ինք ու քաղաքին ծայրը ամուսինէն ժառանգած տնակին մէջ կը բնակէր միամօր աղջկանը հետ : Ապրուստի միջոց չունէին, ինք ստիպուած էր լուացքի երթալ ունեւորներու բնակարանը : Այս առթիւ աղջիկը աւանձին կը մընար տան մէջ և թաղին երիտասարդները տանը շուրջ կը սլքտային զայն տեսնելու և անկէ ժպիտներ խելու տունդով : Լուացարարինը անդամամանելի չարիքի մը առաջին առնելու համար, կը խնդրէր որ աղջիկը մեր տունը մնայ առանց վարձքի ու թեթեւ աշխատութիւններով փոխարինէ իրեն ընծայուած աստիճանականութիւնը :

Առաջարկը սիրով ընդունուեցաւ, ու Սուրբիկ այն օրուրնէ աղջիկը դարձաւ մեր տան, ուր ամէն մարդ կը համակրէր անոր : Լուացարար մը ինչպէս ծնունդ տուած էր այսչափ գեղանի ու փափուկ աղջկան : Առաջին անգամ Սուրբիկը տեսնողներ այս անխուսափելի հարցումը կուղղէին, հիասքանչ մնալով անոր անթերի գեղեցկութեան վրայ, որ ալ աւելի կրկնապատկուած էր մեր տան մէջ վարած բարեկեցիկ կեանքին և հագած վայելչաձեւ հագուստներուն շը-

նորհիւ : Մայրը թէեւ առիթ չէր ունեցած զաւելին դաստիարակութեանը վրայ խորհելու, բայց Սուրբիկ բնական ուշիմութեամբը միշտ հոգածու էր ինքզինքը կրթելու և չգիտցածները սորվելու, այնպէս որ մեր տունը ընդունուելէն երկու տարի ետք, կատարաւ օրիորդ մը եղած էր ու տնական ամէն պարտականութիւններէն զատ՝ յաջող կերպով ալ կար ձեւ ու ձեռագործ կ'արտադրէր իր բօլբոլիկ սիրուն մատուցներով : Վերջին ծայր աստուածավախ էր ու ազօթաւոր : հարիւր հատնոց երկար համրիչ մը ունէր պահեստի, ամէն իրիկուն՝ պարտաւորիչ սպասարկութիւնները անթերի կատարելէ ետք, կը քաշուէր մասնասենեակը և հարիւր ծունկ աղօթք կ'ընէր, իւրաքանչիւր ծնրադրութեանը հոյս Բրէն կամ հասարակ խոսքովանիէն տուն մը ըսելով ու համրիչէն հատ մը քաշելով : Այս աղօթքը պարտաւորիչ էր, ուրկէ եւ ոչ մէկ պատճառ կրնար զինքը արգիլել : մինչեւ իսկ ամենէն ծանր յոգնութիւններու ենթարկուած գիշերներն անգամ հարիւր հեղ պիտի ծնրադրէր, որուն թունդ ձայնը կարճադանդէր հանդիպակաց սենեակներուն մէջ :

Բարեպաշտութեանը չափ ալ բարեմիտ էր Սուրբիկ, և ամէն տարի Կաղանդին մեծ հաւատքով՝ կէս գիշերին՝ տան պարտէզին ստորոտէն հոսող առուակէն ջուր առնելու կ'երթար, լսած ըլլալով որ հին տարիին նոր տարւոյ փոխանցուած օրը ճիշդ կէս գիշերին ո'վ որ առաջին անգամ առուէն ջուր առնել յաջողէր, ոսկի խնձոր մը պիտի գտնէր իր պախրածին մէջ :

Այս ոսկի խնձորը իտեպը եղած էր Սուրբիկի, որ ամէն տարի Կաղանդին, կէս գիշերին՝ ստուերի մը պէս անձայն անշուշտ կ'անցնէր պարտէզին լերկ ծառերուն տակէն ու սառած ձիւնի խաւերուն վրայէն՝ զգուշաւոր քայլերով կ'առաջանար դէպ ի առուակը, միշտ յուսալից և հաւատաւոր :

Իրարու յաջորդող ձեռնունայն վերադարձները սակայն, բնաւ չէին խախտեր դեռատի աղջկան հաւատքը : անիկա յանգանքը միշտ իրեն կը վերադրէր, որ չէր կրնար ճիշդ փոխանցումի վայրկեանին հասնիլ :

Վերջին կազանդին կրկին արթնցաւ Սուրբիկ, պատրաճը ձեռքը՝ ուղղուեցաւ դէպ ի առուակը, խիտ ուռիներ, բարտիններ եղերած էին զայն՝ հովանաւորելով աջէն ձախէն: Գեռատի աղջիկը երբ նստաւ կակէտին հասաւ, ջերմեռանդութեամբ երեսը խաչակնքեց ու ձեռքի պատրաճը ջուրին մէջ մխեց, շարունակ աղօթելով: Դիշերուն մութին մէջ կէտը բան մը երեւցաւ աչքին՝ ջուրին հոսանքին վրայ, աղջիկը չըւարեցաւ պահ մը արդեօք ոսկի խնձորն էր: հազիւ երկվայրկեան մը միջոց ունեցաւ տատամսելու, առարկան առջին եկաւ, զոր սրտատրոփ բռնեց ջուրին վրայէն: ՈՍԿԻ ԽՆՁՈՐ մըն էր:

Յուզումին ու հրճումանքին մեծութենէն չէր կրնար ոտքի վրայ կանգնիլ: Ոսկի խնձորը: Ամբողջ խեղալին, տարիներէ ի վեր երազած իղձերուն պսակումին կարծանաւոր: Տասներորդ անգամ ըլլալով համբուրեց զայն: աղօթքներ մը մնչեց վրան, զրպանը դրաւ: անկէ հանեց միւս գրպանը դրաւ երբ մեկնելու կը պատրաստուէր: անուական ձեռք մը կեցուց զայն:

Աղջիկը սարսափեցաւ:

—Աստուած քու իղձդ կատարեց, Սուրբիկ, ըսաւ, տեսայ, ոսկի խնձորը զրկեց քեզ, դուն ալ իմ իղձս կատարէ: խօսք տուր որ ամուսինս ըլլաս:

Ասանկ կէս զիշերուն՝ մանաւանդ սիրտը սրբութեամբ լեցուած մէկ վայրկենին՝ սիրոյ վրայ խօսիլ, բացարձակապէս անկարելի էր Սուրբիկի համար, որ լուռ ճիգ մը ըրաւ երիտասարդին ձեռքէն ինքզինք ազատելու: Այս վերջինը սակայն աղջկան նեղութիւնը տեսնելով, թախանձագին չեչտով մը.

—Բեզ բռնաբարել չէ նպատակս սիրելիս, մըմնջեց: մինակ խոստում մը կ'ուզեմ բերնէդ որ մնացած ձեւակերպութիւնները կատարեմ: մինակ իմ կամքս չէ այս ամուսնութիւնը: Աստուծոյ կամքն ալ կայ անոր մէջ որ այսօր ոսկի խնձորին հետ նշանած մըն ալ կը զրկէ քեզ:

Երիտասարդը դրացի բարեկեցիկ ընտանիքի մը զաւակն էր որ տարիներէ ի վեր պանդխտութեան մէջ կը գտնուէր և բաւական հարստութիւն չահելով՝ ծննդավայրը

վերադարձած էր ամուսնանալու համար: Առաջին անգամ Սուրբիկը տեսնելուն՝ հիացած էր անոր դեղեցկութեանը վրայ և որոշած էր անոր հետ ամուսնանալ, հակառակ իր ծնողացը ձգտումներուն, որոնք կուգէին հարուստի մը աղջիկը առնել իրեն: Երիտասարդին քոյրը բախկամութիւն էր Սուրբիկի և կազանդի մօտենալուն առթիւ՝ եղբօրը պատմած էր, ոսկի խնձորի մը հետամտիլը գեղանի աղջկան:

Սուրբիկի վերաբերեալ ամէն դէպք մեծ կարեւորութիւն ունէր երիտասարդին աչքին որ հաճելի անակնկալ մը ընծայելու համար ապագայ նշանածին, ոսկի խնձոր, ու ճարտարօրէն պատած էր խնձոր մը ու առուակին եղբւրքի ծառերուն տակ պահուելով՝ աղջկան բուն իսկ ջուր առնելու պահուն, վերէն գլտորցուցած էր զայն:

Ոսկի խնձորը ո՛չ միայն Սուրբիկի հաւատութիւնը պիտի զիւրացնէր, այլ նաեւ զօրաւոր պատճառ մը պիտի ըլլար որ ծնողքը խղճահարէին անոր հետ ամուսնութիւնը արգիլելու, քանի որ ատանկ երկնային շնորհի մը արժանացող աղջիկը ամենէն բարեբաստիլը պիտի նկատուէր:

Երիտասարդը արժանաւոր էր, Սուրբիկ բերան չբացաւ, մինակ ցփծ ձայնով մը, տիրուհին հետ տեսակցիլ յանձնարարեց, ինչ որ բացարձակ հաւանութիւն կրնար թարգմանուիլ:

Կազանդի առթիւ ամբողջ ընտանիքը կէս զիշերէն արթնցած էր և մեծ իրարանցում կը տիրէր տան ամէն մասերուն մէջ: Սուրբիկ հողի կրկնակ յուզումներով առլըցուած՝ պատրաճը ձեռքը՝ վերադարձաւ և առանց ո՛րեւէ մէկու բան յայտնելու, տան տիրուհին մասնասնեակը մտնելով՝ կատարեալ ջերմեռանդութեամբ պատմեց անոր թէ՛ առուակէն ջուր լեցնելու պահուն ինչպէս գտած էր ոսկի խնձորը:

* * *

Երիտասարդին հետ ամուսնանալէ տարի մը ետք միայն խմացաւ Սուրբիկ ունի խնձորին իսկական պատմութիւնը: Բայց միշտ թերահաւատ մնաց ան ամուսնոյն խօսքերուն ու մինչեւ վերջը կը հաւատար թէ ճշմարտապէս երկնային պարգեւ մըն էր ոսկի խնձորը:

ԳՍԱՍԻՄ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՌԻՆ

ԼԵՏԲԵՐԸ

Փախչող Տարիին

Սննդայտասակ կ'անցնին իրերն յուշաբար,
 Ինչպէս ցոյցերն աղաւանդի խօշապար,
 Ինչպէս հոյներն աշխներու փրփուրին,
 Երազներն ալ՝ որ առջնանց կը մարին :

Ինչպէս ցոյցերն աղաւանդի խօշապար,
 Կ'անցնին հաւեֆ, լուռ ցաւերով անհամար.
 Հեռուան ծոցը ներկան՝ յուշ մը կը պահէ,
 Հեֆ մ'արցունսֆոս, նիւթուած ցաւէ, հոգերէ :

Կ'անցնին հաւեֆ, լուռ ցաւերով անհամար,
 Ըսուերեշով ծիր-կաթին մը նսկեշար.
 Շրջանըկարն ալ իրերուն կիստուն,
 Կոզուարէ հիւանդաբոյր շունչ մը դէտ :

Ըսուերեշով ծիր-կաթին մը նսկեշար,
 Կը քրոյշիսն մեր տարիներն ալ. ու յա՛ր
 Հեկեկանսֆով մ'անոյշ անցեալն ու հեռուն
 Թովֆը կուտան իրենց աղաւոր հեֆերուն :



ԹԵՂԵՆԻ

ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ՍԷՐ

[ՀԵՐԵՍԱԹ]

Խրոճած, քիկքոն բաներ էին երկուսն ալ, մագերէին քանի պէս ձեռնըրկած, երեսներէն խորշով-մորշով, մեջքէն երկու ծայր, եւ անմէկ երէւոյթ մը իրենց մարմնուն ճայռածֆին մէջ՝ որ համակ դէպ ի փոս ծռէրու շարուքիւն մը կը ցոյցունէր :

Ո՛րչափ կ'ընէր կարգուեղին. կնիկը ֆա՛ր ձաքեր որ մինչեւ յիսուն բարձրացունէր, մինչ երկըր սաւ մըն ալ վրան կ'ելեղցունէր : Ամեն իժիր սարիֆի այս ստուշիսը կը բացուէր երկուսին միջեւ եւ կերպարանք կ'առնէր զարմանալի, բունտիկ վեհի մը՝ ուր իրենց կեանքին դրուագները իրարու ետեւէ կը շարուէին, յիշատակներու անուշ ֆրոնտով՝ մը :

Տուն մը՝ մեկ սենեակով, գետնի երես : Ա՛ս եղած էր իրենց առաջաւոր եւ գործունակ միակ բոյնը . մէջի չորս պատերը բայց չեզո՛ւ ունենային ու պատմէին այն անասնման սիրելոյքիւնը՝ որ փոխանակ օր օրի վար իջնալու իրենց պառնուցած սիրտերուն ջերմաշափէն, դէպ ի վեր սողոսկած էր միշտ : Տարիները ո՛րչափ գլորէր էին, Ծերութիւն եւ Զբառնութիւն, — անոք մարդոց աւ երկու պատմաստները — ո՛րչափ ծանրըցէր էին իրենց ուսերուն, կարծես անոնք

պէտքը զգացէր էին մեկզմեկ ամեն աստիւստի սիրելոյ : Ապրուստէն կարճը խեղճը եղեր էր, բա՛ն . . . սիրտերէն հարուստ մարքոյ : Իրաւ էր քե իրենց կեանքի շապտերը երբեք չէր յուսաւորուած այն շֆեղ ճառագայթումով՝ զոր ծնող զաւակ մը հետք կը բերէ, միւս կողմէ ասկայն անուանական այդ անշուքիւնը պատճառ եղած էր որ սերերէն չի խոռոկէն՝ զաւկի սալու համար : Հիմա չէ քե երկի-կնիկ, հապա՛ սքանկ մը ֆուր-աղբար դարձած էին, վարդի՛ պէս իրար հոտոյրացող, առտու իրիկիուն իրարու հետ դիմաց, վերջապէս իրարմով :

Խճիթի, դոյր ըսեմ՝ ախոյի ձեռով յարկ մը կ'երկնար տուներուն կոնակը : Կնգի ամաններ բացուէր բացուէր՝ վրան էին շարուէր, եւ անձրեւն ու ձիւնը աղտոտ կարմիր մը ֆաւր էին անոնց այտերուն : Ա՛ս ծածֆին տակ էր որ ծերուկը կ'առանձնանար ցորեկները եւ շէրս շէրս տախտակներու հետ կը խաղար : Արհեստով աստղագործ էր, տեսակ մը կամեական աշխատութիւն՝ որ հասարակ ճաղ շինելէն անդին չէր անցներ : Արուարձանին մէջ մահ մը պիտի պատահէր, գայիւն պիտի իրեն անտուկ մը ապսպրէրու : Ի՛նչ կամաց, ու ի՛նչ ալ սեւ վառնակ :

Տարիին վերջին ամիսին վերջի՛ն ալ օրն էր աս իրիկիունը : Անարեւ, ցուրտ, գորշ վերջալոյս մը գացէր հորիզոնէ ի վար . անհետ եղեր էր ու մութը աղիկ մը տներ էր գետնները : Հով մը՝ կասողած փրփրած, հիւսիսի աղիկներէն փրփած, կ'ոռնար անցըրպէտէն մէջ ու խրխիլի տակը հիւստէն կը ցնցէր : Ներսը, երկի կնիկ դիմ դիմի ճակեր կը տախտակէ . մեկ երկու կամով հագլի կար կրակարանը, ծերուկին գրպանի տանոցներուն պէս :

Նայիս, դուռին կապիւնը կը ֆաշուի եւ ժամկոյ ախպարը ներս կը մտնայ . ճաղի մը ապսպրանքը կայ նորէն, մեկը ճողկէր էր, առտուն կանուխ հասնէրու էր անտուկը : Կանխավճարը կը շխրտայ ծերուկին ափին մէջ, մինչ պառաւը ունեղիին սեւ մատերուն մէջ



Ս.Լ.ՓԱՍՏՆԱՆ

ԱՊԱՇԽԱՆԱԾՈՒԹՅԱՆ

[Նմանողաբար]

Իր հարսնիքին նախորդ առտուն
 Թովմաս զրնաց երեցին տուն,
 Եւ ծնրադրած առցին անոր
 Գործած մեղքերն իր հին ու նոր
 Մեծ ու փոքրերն, աներկեւան
 Եղաւ արեւնին աչ խոստովան,
 Եւ յայտնեց խոր զղջում ու ցաւ:

Խոստովանանքն երբ վերջացաւ
 Ճաւքան, յանկարծ, մըտաբերեց
 Թէ ծերունին, բարի՛ երեց,
 Մոռցած էր խիստ հաւանօրէն
 Ապաշխարանք մը տալ իրեն...
 Վազեց, եկաւ երեցին քով:

Փորձ քահանան, նուրբ հեղձանիով
 —“Ապաշխարանք, ըսաւ, յարմար
 Չանց ըրի տալ մեղացոյ համար...”
 —“Ինչո՞ւ...”

—“Բանի որ, սիրելիս,
 Վա՛ղն իսկ, արդէն, կը կարգը իս...:”



ՅԱԿՈԲ ՏԷՐ.ՅԱԿՈԲՅԱՆ

ՏՂՈՒ ՀՈԳԻ

Կաղանդի առտուն կը քակուէր սակի դօտի մը պէս ևւ արևը իր մեծաշուք ու լոցաշէկ նշխարքը կը բարձրացնէր հորիզոնին եզերքէն : Անդին, լուսաւորները իրենց արտեւանունքը թարթելով կ'անհետանան, մինչ մէկ քանին դեռ կը զանդաղին սիրականի մը հրաժեշտ տալու դժկամակ և կարօտայոյզ պէնում մը երկարելով վար, երկրին, ուրիշ բաժնուիլ չուզէին կարծես :

Յանկարծ ճաւաղայթներու խուրձեր վազեցին երկինքի կապոյտ կուրծքին վրայ, մշուշոտ թեթեւ ամպերու ճակատին, որոնց տակէն սառեւերները չլմոր՝ կը փախչէին՝ որսորդէն խուսափող երէններու սարսուռներով :

Հիւսիսի քամին գիշերն ամբողջ իր ճերմակ շունչը փչած էր, ևւ ամէն կողմ ձիւնի անուշ խաւ մը տարածած : Տանիքները քիթան վերարկու մը նետեր էին կռնակներին, ծխնելոյղները կարծես զլխանոցներ զրած էին, ծառերը ճերմակ թարմ ծաղիկներ էին բացեր ևւ պատուհաններն ու դուռները ձիւն-ճերմակ չըջանակ մը անցուցեր էին իրենց եզերքին :

Այդ տարին խորհրդաւոր եղեր էր կարծես : Տարեվերջի օրերուն աղտոտ անձրև մը ցեխոտած էր փողոցները ևւ կաղանդի գիշերուան բուռն ձիւնը եկած իր տակ ծածկած էր ամբողջ անմաքութիւնը երբ, հին տարիին բոլոր լպրծուն կեղտը, ևւ վաւազութիւնը՝ ճերմկեցուցած էր ինչ որ կար

հինէն, խնդ որ կրնար դանել իր խօսական քղանցքներուն տակ :

Առտուն արծաթ լոյսը իր քրքիջները կը ցանցնէր ճերմակ ձիւնին վրայ, որ կը խայտար կարծես, կը սիրուընէր ալեւոր զոյգերու պէս, որոնք իրենց դաւար կեանքին վերգարթնումի պահուն՝ պարմանի խանդով զիրար կը դղուեն, զիրար կը համարուեն :

Ամէն կողմ սակայն փողոցներուն մաքրութիւնը կուրծքին վրայ վէրքերը խոցուած էին. մթնշաղին՝ փոկեղի վաճառորդներուն ոտքերը իրենց ախօսը ձգած էին, որուն վրայ յաճախուելով եկեղեցի վաղող հաւատաւորներուն հետքերը, սեւ երկղներ, մածնող արանտներ փորեր էին :

Ամանորի առտուն իր աննման վրդովմունքը, իր զարթնումը ունի, որ տղաւորիչ ևւ անուշ է յախանապէս : Ամէն տունի մէջ շարժում կայ այդ առտուն, ամէն կողմ սրտայուզում մը կարծես, դուռներ կը գոցուեն, լոյսեր կը վառին, խանդավառութեան կոչեր կը բարձրանան, ուխտագիրներ մամ կը վաղեն, կը խօսին, կը ճլուլան ամէն օրուընէ չաւտ կանուխ, դեռ լոյսը իր սլաքը շառնցուցած արեւելքի ծերպերէն :

Սարգիսենք ալ կանուխ արթնցեր էին : Սարգիսենք աղքատ էին, քիչաւր ընտանիք մը. որքեւայրի մայր մը ևւ քոյր ու եղբայր՝ որոնք իրենց գլուխը քաշած էին միայրիկ փայտեայ անակի մը մէջ, ամսական երեւուն դրաշխ վարձքով :

Նրբ հայրը միւռած էր Աղդ. Հիւանդանոցին մէջ կուրծքի հիւանդութենէ, կնոջը՝ Մարիամի ձգած էր վեց տարու մանչ մը՝ Սարգիսը ևւ անկէ պզտիկ աղջիկ մը՝ Էօթէնը : Պարզ արհեստաւոր՝ ոչինչ կը ձգէր, ոչ մէկ զրամ կամ հիւղակ մը, ևւ նոյն իսկ մեռելը Հիւանդանոցէն վերցուցեր էին ևւ կինը քաղելով գոցած էր հոն էրկանը յուզարկին ներկայ ըլլալու համար :

Անկէ ետք էր որ սկսած էր դժնէ ևւ վատտակահիւս կեանք : Առջի օրերը դուռ դրացի ուտելիք զրկած էին ևւ երբ սուգին քաւսունքը լմացեր էր, Մարիամ հոս հոն ինկած էր սպասուհիութիւն ընելով, լաթ լրւաւով, տախտակ չփելով՝ չոր հաց մը բերելու իր որբերուն :

Դուռնէ դուռ այս տաժանքոտ և քրտանաջան վազվզուքովը հաղիւ օրական հացերնին կը ճարէր և ամէն ամիս տունին վարձքը կրնար դոյցել: Սարգիս Գլորացը կը շարունակէր, մայրը չուզելով որ ան ալ հօրը պէս ըլլար ետքը. թող կարգար չէնք չնոր՝ մարդ ըլլար: Այսպէս կ'անցնէին տարիները, աղաքը կը մեծնային յուսալից և ուշիմ:

Կաղանդ ծնունդ կը մօտենային և դեռ հաղարուսէ կարօտութիւն ունէին: Սարգիս հօրը մեռնելէն՝ երեք տարիէ ի վեր նոր հագուստ չէր հագեր. մայրը աշխատած տուններէն գործածուած հանդերձեղէններ կը բերէր և անոնցմով կը լրանար ամէն բան: Անցնող Զատիկին մայրը անպատճառ խօսք տուած էր որ Ծնունդին շուկայէն նոր լաթ մը պիտի առնէ տղուն: Ան ալ համբերած, յոյսով լեցուն, ամէն առիթի մօրը աչքերուն մէջ ուզելով կարօտակէզ ակնարկը, կը հարցնէր, կը յիշեցնէր խօստումը: Հէգ մայրը

—Աղօթք ըրէ զաւակս, ան ալ կ'ըլլայ... կը մրմնջէր միայն:

Իրաւ ալ միտքը դրած էր որ զաւակին սիրտը չկտորէ, աչքը ետին չձգէ: Բայց ձեռնու գրեթէ Գործերը գէշ գացեր էին, ըստ պատահութեան համար կանչողները պակասած էին, և երբ ոստակի քանին իր աղաքը դողացուց և անոնց ձեռուրները կարմրեցուց, վազեց վազվուտեց, կանխիկ աւելի դրամ առաւ իր աշխատած տուններէն և հաղիւ քիչ մը ամուլի ճարեց: Հիմա Կաղանդն ալ կուգար, Ծնունդն ալ, ինչ պիտի ընէր, դործի նոր քեզ մը չի կար, դրամ ուզելիք մարդ չէր մնացած: Սիրտը կը հատնէր խօստումը յիշելով, և տղին սխալումներն ու ակնկալութիւնը տեսնելով. բայց ինչ ընէր: Պէտք չէր ընկրկիլ, ո՞վ գիտէ, գուցէ Աստուած դուռ մը կը բանար...

Բայց այդ դուռը չէր բացուած և Կաղանդը վրայ էր հասած...

Նոյն օրն ալ գլուխը քանի մը տեղ զարկաւ և վերջապէս երկու երեք քառորդի չափ ստակ մը ճարեց: Տղաքները չզբոհելու համար Կաղանդի հաճոյքներէն, քիչ մը անուշեղէն եփեց և քանի մը զրուշի ալ պտուղ գնեց: Միտքը դրաւ նաեւ որ աւելցած երկուքնոցը, Սարգիսին տայ, ան-

տուն վարժապետին կաղանդէք տանելու, և քիչ մը ուրախանալու համար:

Սեղանին վրայ մայրը զաւակները համբուրելով, կ'ուզէր անոնց զրկանքը ամոքել:

—Զաւակս, ըսաւ Սարգիսի, ինչո՞ւ կը մտածես. Աստուած անօթի չձգեց, փառք տանք. չնայիս, փողոցները աս օգին քեզի պէս պղտիկներ բոլորի կը պտտին... Նոր հագուստ. ա՛լ անպատճառ պիտի առնենք Զատիկին. աս գիշերուէնէ ևս վրադ զուլուդ կը կոկեմ, վազը Միւսիւիդ ծեռքը պազնուլու կ'երթաս: Նայէ, Աշոտը, Կարպիսը, Սեդրակը նոր լաթ ունին, անոնք ալ մեզի պէս են, ինչ ընենք զաւակս... Աստուած ողորմած է...:

Ու անոր քունքերը կը շոյէր, այտերը կը գգուէր:

Պղտիկը չէր լսեր սակայն, դառնութիւնը իր մրուրը կը քամէր անոր անխոց սիրտին մէջ: Լուռ մնացած էր և կանուխ պառկած, ընդարմացած մարդու մը պէս:

Աստուած կանուխ արթնցաւ սակայն Փողոցին մէջ վիշտուք մը լսեց: Վարագոյրը վերցուց ու դուրս նայեցաւ: Աչքը անհուն ճերմակով մը լեցուեցաւ: Զին էր եկած: Հոս հոն, եկելէյի գացողներու լապտերներուն լոյսերը արծաթ շուքեր կը խաղցնէին ճերմակին վրայ: Այս նոր, աւոյգ տեմբարնը ամոքեց սիրտը, վայրկենական խանդ մը զգաց, ու մօրը վազելով:

—Մայրիկ ժամ պիտի երթամ, աղերսեց: Քիչ ետք հագուած էր իր ամենօրեայ հագուստը, որ կարծես, կոկիկ, կարուձեւի սեղմումի մը տակ, նորցած էր, հինը մոռցուցած էր:

—Մանչս, աղօթք ըրէ, հա՞, ամէնուս համար ալ աղօթք ըրէ որ Աստուած պապան ողորմի...: Գնա եկուր. քեզի պտաւ կը տամ, վարժապետիդ տանիս, կաղանդ չէք առնես, չըլլար...:

Տղան վարանեցաւ, կմկմաց և դրամը այն ատեն ուզեց:

—Ժամէն ելլելուն կը հանդիտիմ, չըլլար: —Չէ զաւակս, կ'ըլլայ որ կը կորսնցնես. ետքէն...

—Չէ մայրիկ չեմ կորսնցնիր:

Բայց վերջապէս յանձնեց. քանի որ վիշտը կը ծռէր, թո՛ղ կարօտը առնէր...

Երկու քնոցը ափին մէջ սեղմած ե ձեռքը տարատին զրոյանները, չիտակ եկեղեցի վազեց: Անկիւն մը կեցաւ հոն. միջնադին մէջ մոմերուն ե կանթեղներուն պլպլումը տեսակ մը մեղամաղձոտ ուրախութիւն կը թափէր: Ի՞նչ կը մտածէր, ի՞նչ կը զգար: Միայն, իր զիտցած երգեցողութիւններուն կը հետեւէր մերթ:

Պատարագը աւարտած էր. դուրս ելաւ: Դպրոցը տեսնելուն յիշեց կաղանդէքը, ձեռքը զրպանը տարաւ, ե արդէն դոյնը մոխիր կտրած էր: Ծունկերը սկսան դողալ, մարմինը կը ցնցուէր, սիրտը կը յորգէր: Ներս մտաւ, կեցած տեղը դադարեցէն փնտռեց, ծռեցաւ, դարձաւ. ո՛չ: Արդեօք ճամբան ձգած էր: Եկեղեցիին դուռնէն մինչեւ փողոցին անկիւնը կարօտի ե յուզումի ակնարկներով քանդիցս չափեց, որովհետեւ կը յիշէր թէ մինչեւ հոն դրամը ափին էր եւ անկէց անդին ձեռքերը դուրս հանած էր: Բոլոր դրպանները չըջեց, թոթուեց, դարձեալ եկեղեցի մտաւ: Նորէն դիտեց ձիւնները որոնք լուռ, գաղտնապէս բան մը չէին խօսեր իրեն. գինովի պէս եղած էր, աչքերը կը մթազնէին: Միւսիւն ա՛լ իրեն կաղանդէք չպիտի տար, ինք չպիտի կրնար վարժարան մտնել, գոնէ՛ հեռուանց զիտելու գունդեղ պատկերները ե ոսկեզօծ օրացոյցները: Մայրիկը որչա՛փ իրաւունք ունէր. կը կորանցնէս ըսած էր ե ա՛յնպէս ալ եղաւ: Ի՞նչ ընէր, ուր դառնար...: Եկեղեցիէն ելեր էին ե լուսարարը մոմերը կը մարէր: Դարձեալ գնաց ներս, կը գանդաղէր, կը յետախուզէր, կը թուլնար: Այս միջոցին եկաւ ժամկոչը ե զայն դուրս վռնտեց: Դողը, յուզումը կիրքի փոխուեցաւ, երեսը տենդի կարմիրով վառ դուրս ելաւ: Դուրսը սնանկներուն մէջ թաղականները ստակ կը համրէին: Անոնց կոյտին փայլը աչքերը չլացուց... վայրկեան մը ներսէն եկաւ յարձակիլ, յափշտակել բոլոր մը ե վազե՛լ, վազե՛լ: Բայց մէյ մը դետին, ինքն իր վրայ նայեցաւ, յետոյ դէմքներուն. հսկայ էին, լեռ էին անոնք իր քով ե մէկ հարուածի տակ պիտի ընկճէին: Սիրտը դաշուռած էր, թոյն առածի պէս էր, ե ալ կարծես անտարբեր, ընկճուած, գլուխը կախ

եւ աչքերը արիւնոտ կը հեռանար եկեղեցիէն ալ, դպրոցէն ա՛լ...

Յանկարծ ուրախութեան քրքիջներ լսեց ետեւէն: Չդարձաւ: Խօսողները մօտեցան: Հարուստի զաւակներ էին, նոր հագուստ, նոր կօշիկ, փայլուն ու մաքուր, որոնք վարժապետէն իրենց առած չողչողուն նրւէրներուն բաղդատութիւնը կ'ընէին: Զրկեցաւ զսպել հետաքրքրութիւնը, մօտեցաւ: Անոնցմէ մին հրեց Սարգիսը, մինչ միւսները կը խնդային: Սրիւնը գլուխը ցաւքեց, աչքերը կարմրեցան, դատողութեան մէջ կայծ մը փայլեցաւ, անիրաւութեան գաղափար մը, անհաւասարութեան վէրքը, որ իր ձեռքը բարձրացուց: Անոնք ունէին ե ինք չունէր, անոնք կը խնդային ե ինք դառնութիւն կը խմէր, անոնք հարուստ էին եւ ինք անօթի. ինչո՞ւ, ի՞նչ պատճառով ո՞վ էր տնօրիններ այսպէս: Իր աղու միտքը ի դուր կը ճգնէր: Եւ դեռ այս զրկանքը չի բաւէր ու նախապի՛նք ալ: Կարծես կոկորդը սեղմեցին, երբ լկրտած խօսքի մը ե զգուսնքի քրքիջ մըն ալ ուղղեցին. յանկարծ վրանին յարձակեցաւ. աչքերը դող, ճանկերը տնկած կատղած կատուի մը պէս, փղթեց ինչ որ գտաւ, քաշեց բրթցուց անոնց հագուստին թեւերը, պատուեց պատկերները, ճղմեց կոխտուեց գէրքերը, մինչ անոնք հակառակ երեք հոգի ըլլալնուն իրենց հարուստի վախկոտութիւնով կ'ընկրկէին կը փախչէին:

Դպրոցին մօտ էին. անոնցմէ մէկը արթնութիւնը ունեցաւ կանչելու անտեսը, որ մինչեւ դուրսի դուռը իրենց ուղեկցեր էր, նուէր առեր էր...

Վայրկեան մը չէր անցած դեռ, ե Սարգիս իր նոսպային մէջ տեսաւ որ կոչոտ, մեծղի եւ վայրագ մարդը, անտեսը, կը վազէր իր վրայ: Սարսափեցաւ, փախաւ իր փոքր ոտքերուն բոլոր ուժովը, սակայն ուշ էր. ծանր ձեռք մը, արջի թաթի պէս ինկաւ զլսուն վրայ, սահմակեցուց զայն ե պզտիկը քանի մը ջղային քայլերու թաւալումին մէջ, գլտորեցաւ, զգեստուեցաւ երեսի վրայ, ձիւնի զանգուածին մէջ, որ իր դէմքը չփեց, այրեց, խանձեց կարծես, իր ցուրտ խածատքովը: Երկու կից ա՛լ ե անա մար-

դուկին կատաղութիւնը ինկած և դարձած էր իր շողմը շռայլելու հարուստի հարուածուած զաւակներուն :

Անցորդներ վերցուցին Սարգիսը իր ճաղղած , զգայալիկուած վիճակէն : Ոտքի կանգնեցաւ , կարծես զեռ հարուածը գլխուն վրայ էր և բան մը կը հռնդար իր շուրջ : Տանը մօտ էր , գինովի ուէս տատանելով բայց սուր մղումով մը հազիւ կրցաւ եր-

թալ առաջ . երեսը կը տողորէր , ձեռուները կապուտցած էին : Հազիւ դուռը բացուած , ինքնամուտաց և խելացնոր , գնաց ինկաւ շրջիտած մօրը գիրկը , արցունքի հեղեղ մը փրթաւ կուրծքէն , մինչ իր հեկեկանքին մէջ անդադար կը հեծեծէր .

— Մայրիկ , աման մայրիկ , կը մեռնիմ կոր , ուրիշ մեռցնեն ինձի մայրիկ , անուշիկ մայրիկս . . . :

ԶԱՅԵԼԱՆԵՐ

Իր սրնդուսէ մարմինը կոյս՝
Կայծն է երկնից , բոցն է կեանքի ,
Որ պահուրճած անպին սակ յոյս ,
Համակ սիրով կը բորբոսի :

Շրդարշ մը սոսկ՝ մըշուշի պէս ,
Զիւնէ շանջիւն վար կը քափի ,
Ու մազերը շայն , ոսկեգէս ,
Կը շողշողան իբրեւ արփի :

Համբուրեցու հուրէ սեւեյկն՝
Շրթունքները կը բորբոսին ,
Այիքները կը դողդոջեն՝
Հանջին վրայ իր մոյեգին :

Գեղեցկութեամբ մը հոշանի ,
Ու նորաբոյս ծաղկի նըման ,
Զեղուն կուրծքը կը զարնանի ,
Կ'երեւոյն զերդ խընկաւան :

Հոն կը մըխայ բուռ մը կընդունկ՝
Անոյշ բոյրի հրայրներով ,
Ուր վառ կիրքս յարաստանի
Կը կար մըրի հոգեխրով . . . :

Օ. ԳԱՄԵԼԻՍ.



ԵՐ. ՏԷՐ.Ա.Ն.ԴԻԷԱՍՏԱՆ

ՊԱՐՈՅՐԻՍ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Պարոյր, կաղանդն ե լկեր,
Քու սիրական տարետուն,
Մենք՝ ընկերներդ՝ հոս ի վեր,
Դուն շիրմին գոգ, վարը հո՛ն :

«Հայրիկ, կաղանդն երբ կուգայ»,
Կ'ըսէիր ինձ դուն յաճախ . —
Կաղանդն եկած ե ահա,
Բնութեան պարզեւն անյաջաղ :

Պարոյր, ծաղկունք Մայիսի
Վաղ քու բոռովը տեսան,
Բայց երբ կաղանդ կը հասնի,
Բոյրդ իմ կեանքես անբաժան :

Խունկը վարդին կը բուրբեր,
Ծիծաղ ծաղկին կը ցընծար,
Երբ բախտն ասդին աննըւեր,
Քամիւ զաւկիս սերն ի սպառ :

Սեւ ըստուեր մը մահագոյծ
Իմ Պարոյրիս պատե՛ր գոգ,
Սլանար հոգին միշտ աշխոյժ .
Վա՛յ ձեզ խնամքներ կանխահոգ :

Յոյք այտերուդ գեղափայլ
Կարմիրն ահա ակներեւ
Աչքիս առջեւ անայլայլ
Շողան գըլխուս իմ վերեւ :

Վա՛րդ այտերուդ այն բոսոր,
Ծիրանագեղ ճակտիդ հուր,
Մեկ պահիկի մեջ բոյր
Պատեց դա՛ուկը ահոյր :

Վա՛խ որ համբոյր մը հեշտին
Կարօտակէզ շքրներես
Դրոշմի լայնի քու ճակտին
Շա՛տ անկարող ե իմ սերս :

Կաղանդի մե՛ծ այդ ընծան
Բնութիւն զլացաւ հայրիկին .
Եւ երբ մանկանք կը խայտան,
Քեզ կը փնտռեմ իմ ջորս դին :

Կայտուուն լվագբերդ յաղթ մարմնով
Ա՛յ ջը տեսալէս, Պարոյր,
Երբ դեռ ցընծար ծաղկին ջով,
Հիմակ ձըմե՛ռ տըխրաբոյր :

Այո՛, Եր'յար ինձ համար
Տարին ձըմեռ մ'ե յաւետ,
Ո՛չ մեկ ծաղիկ եւ դալար
Պարոյրս ինձ տան գունաւետ :

Կաղանդ Պապան կը գոչէ
Պարոյրս իւր սուր կանչւանով .
Կ'ըսենք . — Պարոյրես հոս չէ,
Տարա՛ւ զանի խեռ մեկ հով :

Տարա՛ւ քամի մը յանկարծ,
Մենք ալ չգիտենք րէ ի՛նչպէս
Իր կորովի քափն արծարծ
Ըսպառեցաւ շո՛ւտ այսպէս :

Խորունկ ձըմրան այբերեն
Պաղ կաղանդ մը հեւալով
Եր երգեցիկ ժիր խումբեն
Պարոյր փընտռե՛ր դեռ մեր բով :

Դո՛ւ, պատուական եղանակ,
Դարունեն ալ գերազանց,
Որ քու բուրբիդ հակառակ
Մանուկներուն կ'ելնես յայց :

Ամբողջ կեա՛նք մը տասնամեայ
Ձերմ գորովի մեզ առիթ
Եւ երբ վայել կը մընայ,
Թափին վարդերը ճակտիդ :

«Արծիւն մեծ քրոջուն է,
Կ'ըսէիր ինձ գոռ շեշտով:
Հիմա, Պարոյր, այն քեզմէ
Շատ վար մընաց ապահով:

Դուն ճախրեցիր երկնասլաց
Ուր ո'չ քրոջուն կը հասնի,
Ո'չ իսկ ծնողաց ողբն ու լաց,
Ո'չ իսկ նըւեր կաղանդի:

Հոգի'ս ամբողջ քեզ նըւեր:
Քու սիրական պատկերդ յար
Կախուած մըտքին մէջ ի վեր,
Ահ, այն շրթանց կարմրալար:

Քու մայրիկիդ լացն աղի
Ամենօրեայ ողբն անոր
Յարմար նըւեր մ'են քեզի
Նոր կեանքիդ մէջ երկնաւոր:

Դուն մարմնաւոր իմ բոլոր
Հաճոյքն ու խինդ հետ տարիր:
Հաւատքըս դեռ անխտոր
Իմ մըտքիս շուրջ կ'առնու հիւ:

Այդ Աստուածեան կաթ մի կայծ
Աշխոյժս հրահրէ դեռ մըտքիս,
Երբ քեզ ուզեմ ելնել լայց,
Դաւարանայ հոգիս յիս:

ԶԳԱՅՆՈՒԹԻՒՆ

Վըճիրտ ու հանդարտ յի՛մ մըն է հոգիս,
— Հեղուկ արծաթէ պըսպըղուն հայլի, —
Ուր կը ցոլայ դեռ, ուր մի'շտ կը փայլի,
Պատկերը անոր որ կը սիրեր իս:

Ու դուն, ո'վ խարտեաչ անճանօրումի,
Ժըպիտներովդ կը պղտորես զայն:
Օհ, չեմ սաստեր քեզ... յեզուն է անճայն,
Ու սիրտս ալ լքման մեծ վիշտը ունի:

Սրբապղծութեան վայրկեանն այս խոռով,
Պետք էր որ սակայն խոստովանէի,
Բանաստեղծի լուրջ զգայնութիւնով:

Դընա՛ ուրեմն, ես՝ անոր գերի,
Պիտի տառապիմ ցաւն յաւետական,
Սիրտի վերքերով որոնք կը կոտտան:

ՏԻԳՐԱՆ ԴԱՍԱՊԵԱՆ

Ահաւասիկ միւս նամակը, —

« Սէրէլէ Արշակունի », — Դիւղ երթալէդ ի վեր մոռցած էիր զիս պիտի ըսէի, եթէ այսօր չստանայի նամակդ որուն մէջ շատ մը հարցումներ կ'ընես : Բայց երանի թէ չհարցնէիր ինծի Ձապէլին վիճակը : Տեսնաս, քոյր իմ, որքան նիհարցեր, անձանաչ երեւոյթ մը առեր է հիմա մեր խեղճ բարեկամունին, հոգեկան անպատում, անասելի տագնապի մը հետեւանքով : Դիտես որ քու լէժին մէջ և յետոյ որքան խորխտ, բայց մի և նոյն ատեն ազնիւ հոգի մը ունէր : Ինք որ անմատչելի էր և շատ մը երիտասարդներու քննքը մերժած, կուսական սրտին բոլոր թափովը սիրեց Տիգրանը, որպէս չի կրնար սիրել աղջիկ մը, և Բարեղի մէջ իր խօսեցեալին կրթչտական յաջողութիւնները, զիս ամիս մը առաջ, տեսնէիր որքան խանդով գրիչով մը կը պատմէր ինծի : Բայց, առաջ, կեանքի դառնութիւնը շատ շուտով ըմպեց խեղճ աղջիկը : Անցած շաբթու նամակ մը առաւ Փրանսացի օրիորդի մը կողմէ որ Տիգրանին հետ նուագահանդէս մը կազմակերպած և անոր յաջողութեանը աշխատած էր : Արուեստի, ներշնչումի, դժացումներու կեանքը որով անորած էին անոնք, ի՞նչ վերջոյ ծնունդ տուած էր սիրոյ : Միայն թէ Տիգրան խղճահար սրղայ մըն էր և սկիզբները պայքարած էր այս նորածիլ սիրոյն դէմ, Ձապէլի սէրը, անձնութիւնը յիշելով : Բայց Փրանսացի օրիորդին դիւթական հրապոյրներուն տակ, իր մերժումները տակաւ կորսնցուցին իրենց դիմադրութեան ոյժը : Նորընծայ երաժիշտը յայտնեց որ չէր ուզեր խեղճ Ձապէլին սիրտը խորտակել և մինչև որ անիկա ազատ չկացուցանէր զինք իր խոստումէն, չէր կրնար ուրիշ միութիւն մը ընդունիլ : Օրիորդը աղերսալից նամակ մը դրեց Ձապէլին և անոր վեհանձնութենէն խնդրեց իր երջանկութիւնը : Նամակին բոլոր թախանձանքները թերեւս օգուտ մը չունենային, բայց բառ մը, միակ սարսեցուցիչ բառ մը կրցած էր խռովել Ձապէլի հոգին : Տիգրան կը կարեկցէր Ձապէլի էութեանը ամէնէն նուրի, ամէնէն զգայուն թելն էր աս : Խորխտ աղջիկը մոռցաւ իր սէրը, երազները, ամէն բան : Իր հպարտութիւնը խորունկ վերք մը

առած էր և այդ վերքին յաւը ա՛յնքան սաստիկ էր որ ուրիշ ամէն զգացում վայրկենապէս մոռցուց իր մէջը : Սիրոյ պէտք ունէր, այո՛, որովհետեւ սիրտը ծարաւի էր անոր : Բայց կարեկցութեան. — Օ՛հ, երբեք : Կը մեռնէ՛ր ու կարեկցութեան պէտք չէր ունենար : Դրիչը առաւ և տենդավառ ձեռքով մը ստորագրեց ամէն իրաւունքներէ հրաժարումը : Բայց երբ զրիչը ձգեց, խեղճ աղջիկը հիւսնդ էր արդէն : Հոգեկան բուռն տագնապը ուժգնակի սարսած էր իր բոլոր էութիւնը : Անկէ ի վեր փոխուած է Ձապէլը : Կեանքը չարչարանք մը եղած է իրեն համար : Ծնողքին, հիւրերուն առջև կը ժպտի, — խեղճ բարեկամունի —, կը ժպտի տխուր, բռնազբօսի կերպով մը, բայց մինակը կամ ինծի հետ ըլլալուն պէս, իր երազներուն խորտակումը, իր կեանքին դառնութիւնը կը պատմէ լալազին . . . : Ներէ՛, ազնիւ բարեկամունիս, եթէ հոս կը վերջացնեմ նամակս, վասն զի յուզուած եմ և չեմ կրնար շարունակել . . . :

Քոյդ — Ձարունի »

Գ.

Այս երկու նամակներուն հետ լրագրի կտոր մըն ալ կար, Օրսան Գեպէրէն մկրատուած, որուն մէջ իրենց սարսուռը խտացուցած էին սա քանի մը տողերը . —

« Երէկ, Հայ աղջիկ մը, Ունգաբանի կամուրջէն ծով նետուելով, անձնասպան եղաւ » :

Փրանսացի աղջկան մը երջանկութիւնը Հայունի մը կեանքը արժած էր :





ԼԻՐՈՆ ՇԱԹՐԵԱՆ

ՂԱՐԻՊԻ ԿԱՂԱՆԴ

(ՊԱՏԿԵՐ)

Պարզուկ համես սեղան մը, վրան չորս պնակ, կաղինով, նուշով, չամիչով ու արմառով լեցուն: Սեղանին խանդուած, քառակուսի փայտին վրայ չորս ծայրը մէյմէկ նուշ ու նարինջ փոկ փոկի անաւամբողջը:

Այդ Կաղանդի գիշերը իրենց սենեակը հրամցուցեր էին զիս, օտարերէն, մէկտեղ տնակալ: Երեքն ալ ամուսնի ու դարիպ երիտասարդներ՝ զաւառէն ինքզինքնին Պոլիս նետած, իրենց այս յստիւն ուսումին մէջ սպասելով յաջողութիւնը իրենց բաղդին, որ աւա՞ղ, զլայցեր էր այս զոյց ձեռնառն ըլլալու:

Անոնց հրաւերը չմերժեցի, ընդհակառակը, սիրով բնորոշեցայ, ես ո՞ւրդէն այնքան կը սիրէի այս վէճակաւ երիտասարդութեան երոտողութիւնը, զոր պանդխտութեան դառն հովը բերեր, փեր էր Պոլիս: Ամենն ալ անուշ, արտակից զաւակներ, որոնք չեմ գիտէր ինչո՞ւ, անա հիմա դիմացս իրենց թխրութիւնը քաղել կ'ուզէն ալօթին քաղցը ու պատրուկ քմբիրին տալ, որ կը շեշտուի, կը լայննայ կարծես, հիմա այս գիշեր երբ նոր տարին փնդիկի մը պէս, կեանք կ'առնէ հինն անխնայեան:

Ու իրաւ ալ ընկերներս կը զուարճանան տակաւ, կ'երգեն քննադատելով իմ ապշած Պոլսեցի լոյսերինն զոր պարզապէս ծաղրելի կը գտնեն գիշերուան այս պահուն: Օղի կ'առաջարկէ մին. երգէ կ'ըսէ միւսը: Ես,

ցոյց տալու համար իմ մայրաքաղաքացի պարծենկոտ գերազանցութիւնս, Պոլսական երգեր կ'երգեմ իրենց, զոր կ'ունենդէն, կ'ողբերուին:

— Հայտէ՛ դուրս ելլենք զաւթ կը ձայնէ մին:

— Ելլենք կը պատասխանեն միւսները, կը համակերպիմ:

Օղիին ազդեցութեան տակ տուններ կըսկըսի երեւոյթ, փախանաւն պ'որ մը դառնալ երիտասարդներու շուրջը որոնց ձայնը իրար կը խառնուի անհանդուրժելի ժխորի մը վերածելով անոնց երգը:

Թափառումները կը շարունակուին փողոց փողոց: — Ղարիպով հետաքրքրուող չըլայ, ձիւնը, մութ երկինքէ մը կ'իլնայ վար, հասիկ, հասիկ, քափ-նետակ պատանով մը ծածկելով զոյց սեւ վերաբոյները: Յետամնաց պզտիկ երգեցիկ մանուկներ, մարած լապտերներ դողդոջուն ձեռներնուն մէջ, կը վազեն ցուրտին տակ դողալով, շահաւէտ վաւախի մը հետանկարովը գրաւուած:

Հիւսիսային ցուրտ քամին որ գիշերուան այս յառաջացած պահուն կը փչէ, կը տանի իր հետ ալօթի ամեն ազդեցութիւն. զուարթութիւնը կը սրբուի ամենուս դէմքէն. եւ ընկերներուս մտածութիւնը կ'երթայ կապուիլ մանաւանդ յիշատակին իրենց հեռաւոր ու տարակալ երգիքին, ուր վե՛ծ մայրիկը համբիշ փաշտելով, վարանոտ յոյսերով իրենց կըստաւ:

Անդադները կը սկսին խօսիլ եւ դեռ քափառումները կը շարունակուին: Կսկիծներ կան որոնք տարիներով կը մոռնաս. գէթ անգամ մը իսկ զանոնք չես յիշեր, բայց որ կրկայ որ հին ցաւին կոտորակը աւելի դառն, աւելի սուր ցաւով մը հոգիդ կը խառնէ:

Աս զոյց համար ալ, ճիշտ ասանկ է կը մտածեմ, իրենց փոքր ի վեր փայտով, դիտելով մուրին մէջ կ'ընտելան չափ իրենց դէմքը որ սգախոր բան մը ունի, մեռելի գացողի մը երեւոյթը կարծես այս մութ, փառաբոյր Կաղանդի գիշերին:

— Տո՛ւն տո՛ւն դարիպութիւնը ի՞նչ է, չես գիտեր, կ'ըսեն ինձի, դարիպին աշխարհը մութ է, կ'ուզէ չորս դին ոսկիով լեցուն ըլլալ:

Կ'զգամ բայց խորունկութիւնը իրենց ցաւին որ արտերին կը խոցէ. կ'զգամ քեզ, մանաւանդ այս Կաղանդի ու Ծնունդի գիշերներն են տարուան մէջ, որ կրկնակի բզբզանել կուտան մարդու հեռո՞ւն, ձգած խրդիկն ու հանին:



Ա. Լ. ԱՂԱԲԵԿՅԱՆ

ՏԻԿԻՆ ՖԻՄԻՆ ՆԱՄԱԿԸ

Այն օրէն ի վեր, երբ Քրիստոսի չեմ գիտեր քանի թուականներուն կինը մահճակալին կէսին ընկեր ըլլալէ վերջ, նեղ գտաւ աղւոր, խորհրդաւոր ննջասնեակներու չորս պատերը և արշաւել ուզեց այն սահմաններէն ներս, զորս Աստուած իր ամենակարող զօրութեամբ մարդուն տուած էր, այլը կամայ կամայ անզգալաբար վրայ տուաւ կորսնցուց շատ մը իրաւունքներ, ինչպէս բարեկամիս կինը՝ որ իր էրիկը կորսնցուց:

Բայց այս աշխարհիս ու բողոքին անիւները կտր չինած է, կինն ու իր կտրութիւնները չինող Տէրը, որով բարեկամիս կինը դարձեալ կրնայ տէր ըլլալ ուրիշ էրիկներու:

Բայց մարդը, յաւէտ իր ամուսնական իրաւունքները կորսնցնելու դատաւարաւորած է, անոր համար որ երես տուած է միշտ կնոջ, անոր այսին այս ըսած է և ունի ու: Շփացուցած, շոյած ու գոռած է միշտ զայն, ամենէն շքեղ տեղերը նստեցուցած է, պէտք եղածէն աւելի երես տուած է անոր և ասով, խեղճ մարդր, ահագին վնասներու ենթարկուած է, կնոջ երեսէն, այն երէսէն, ուրիշ կարմիր անուշ, վարդի փունջեր միայն պէտք է քաղէր իրաւամբ:

Ամէն պարագայի մէջ եղածը եղած է և դարմանումը՝ չըսեմ անկարելի, դէթ շատ դժուար է:

Որովհետեւ այդ դասին յաջողութեանը համար, նախ պէտք է կտրել բոլոր հայելիները, դոցեւ Միւր, Բառէն, Օլիօնը, Պօն, Մարչէն, կտրել կնոջ մազերը, ճամբել բոլոր վարժուհիները մեր վարժարաններէն, կնոջ ձեռքէն պէտք է առնել նաեւ շիք հովանարները, հովանոցները և դաւաղանները և անոց տեղ Սաղմոս, Նարեկ և աղօթագիրք տալու է, Ֆլիւք բառը բառարաններէն և Ֆլիւթողները սալօններէն դուրս հանելու է, լուսարարի պաշտօններ տալու է Կալուօշին, Տօմինօին և Զաւան Մոյրեանին, ամբողջ demiviergeներու mondsը դարձի բերելու համար . . . առաքելական պաշտօններ տալու է . . . Մ. Ա. Պարսաւեանի և Լեւոն Քիրիչճեանի ելն: Եւ եթէ այս ամէնը իրագործուի կէտ առ կէտ, ապահովաբար ա՛լ բուրվառակիր ըլլալ չպիտի ուզենք և ևս նոյնիսկ տեղ պիտի սկսինք պօշտիկառ . . . ծխելու:

Բայց . . . c'est la là question:

Եւ . . . աւա՛ղ, այս ամէնէն վերջ կինները, ամէնը մէկ, գեղեցիկը, աղեղը, չիբնը, գէրը, նիհարը, երկայնահատակը ու բարձրահատակը, վրաս պիտի իյնան, (ո՛հ) զիս պիտի սեւումն, հոգիս հանն պիտի և անմիջապէս հետեւեալ բողոքագիրը խմբագրելով ինծի պիտի զրկեն, ինծի՝ որ այնչափ ատեն ջերմ պաշտպանը եղած եմ աղւոր սեւին և ձեռքէս եկած ամէն տեսակ օգնութիւն չեմ զլացած իրենց:

Այդ ֆէմինիստեան բողոքագիրը, որ մարդ նստած տեղը մէկու կէտ մէթրօ վեր ցատկեցնել կուտայ, ապահովաբար ստնկ պիտի խմբագրուի:

«Պ. Բանա՛գոդ

«Այսօր կիրակի տօն Յղութեան Ս. Աստուածածնի, մենք Ֆէմինիստներս, Բառէ վաճառատան վերի սրահին մէջ խորհրդակցելով որոշեցինք որ ձեր կիններու մասին զգրած, այնչափ յանդուգն յօդուածին դէմ, այս բողոքագիր-պատասխանը զրկենք և ձեզ այս անգամ խօսքով լուալէ ետք, օր մըն ալ երբ ձեռք ձգենք ձեզ լաւ մը լուանք . . . դործով:

«Դո՛ւք, Պ. Լուսթիւնեան ապահովաբար

սիրտ : ո՛չ կին , ո՛չ մանճակալ , ո՛չ ննջա-
սենեակ ունինք եւ կամ այն է որ մեր ըն-
կերուհիներէն մին սաստիկ կերպով կոտ-
րած է ձեր . . . Երբ որ Սյայէս թէ այնպէս
ո՛ր կողմն ալ որ դառնանք չենք յուսար
որ մեզի սրբողելու պատճառներ ունենաք :

«Ի՞նչ է ձեր այս նորարոյս խուլ հակա-
ռակութիւնը մեզի հանդէպ : Ի՞նչու համար,
դուք . . . Պ . Բանագող մէկէն ի մէկ ան-
պաշտպան ձգեցիք մեզի , երբ ասկէ դեռ
քանի մը օր առաջ մեր վաստարանն էինք
եւ մեզի կը պաշտպանէիք տգեղ սեռին այն
յարձակումներուն դէմ որոնք կուղղուէին
մեր ամէն կողմերուն անխափր :

«Բայց կինը դեռ չէք ճանչնար եղեր եւ
անոր գաղտնիքներուն դեռ չէք թափան-
ցած , ասոր համար կանգիտանաք թէ մենք
ամէնքնիս մէկ մէկ անագոններ ենք եւ մեր
մոեղէն բուրները ու ծործորները չատ կա-
տաղի կերպով կը պաշտպանենք այրերուն
վայրագ յարձակումներուն դէմ :

«Զարմանալի բան , ի՞նչ կուղէք մեզմէ ,
Աստուած մեզ ասանկ ստեղծած է եւ ար-
րողը դրածը դուք չէ որ պիտի սրբազրէք :

«Ո՛հ , ի՞նչ toupet notre chère Բանագող :

«Վերջացնելէ առաջ մեր բողոքագիրը ,
պիտի առաջարկենք որ կամ բնդունիք մեր
հետեւեալ պայմանները եւ կամ միանգամ
ընդ միշտ խզէք մեր ձեզ հետ ունեցած յա-
րաբերութիւնները : Բայց ամէն պարագայի
մէջ վստահ ենք որ պիտի ընդունիք մեր
պայմանները , պիտի համակերպիք մեր հը-
րամաններուն , չպիտի կոտրէք հայելիները ,
չպիտի կտրէք մեր մազերը , որովհետեւ ա-
ռանց մեզի համ հոտ չպիտի ունենան . եւ
բեկոյթները , առանց ծաղիկի թաղարներու
պիտի նմանին՝ ննջասենեակները եւ յօդ-
ուածները . . . պարաս պանձակալներու կը
տեսնէք թէ մեզի ուղղած նետերնուդ ծայրը
ձեզի ալ կը դպչի :

«Ուրեմն աչքերնիդ լաւ բացէ՛ք եւ ա-
կանջ դրէ՛ք մեր դրած պայմաններուն :

«Ա.—Ամէն ատենէ աւելի պիտի սիրես
կիները , սիկառին տեղ . . . խունկ պիտի
ծխես եւ փողոցը մեզի հանդիպած ատենդ ,
պիտի ընես այն պատիւները , ինչ որ կրնան
Աւետարեւրի բաժանորդները Very reverendնե-
րուն հանդէպ :

Բ.—Պաշտպանեցէ՛ք միշտ մեզի եւ մենք
մեր ձեռքէն եկածը եւ սրտէն բղխածը չպի-
տի զլանանք քեզի պայմանաւ սակայն որ
մեր ունեցածը միայն տանք , քանի որ la
plus jolie fille du monde ne peut donner que
ce qu'elle a :

«Գ.—Ուր որ գտնուիք միշտ քարոզե-
ցէ՛ք թէ՛ կինը , անուշ ու երկնային էակը ,
բոտ ձեր նախնի վարդապետութեան , պէտք
է կաթով , մեղրով , նուշով , անուշով , սէ-
րով ու սիրով սնուցանել . սնդուէ , բեհե-
ղէ չղարչներով պէտք է զայն զարդարել եւ
պաշտել ու ծառայել անոր այնպէս՝ ինչպէս
կը պաշտեն ու կը ծառայէն քուրմերը . . .
պուտտաներուն :

«Դ.— Հակառակ պարագային եթէ երբեք
մեր այս ամէն առաջադրութիւնները մեր-
ժէք եւ յամառիք դէպի կրօնական միա-
բան բլլալու ձեր ձգտումին մէջ , լաւ յի-
շեցէք թէ՛ պարահանդէսներու , երեկոյթ-
ներու նուագահանդէսներու սեղանը ահա՛
կսկսի , որոնց պիտի յաջորդէ Մեծ Պահքը
եւ դուք ի՞նչպէս պիտի բռնէք այդ եօթը
երկար շաբաթները , երբ շաբթուան մէջի
պաքերը անգամ անկարող էք բռնելու :

«Ե.—Երեկոյթներու մէջ նախ մեր եւ յի-
տոյ . . . վարդապետներուն , տէրտէրնե-
րուն ձեռքերը պիտի համուրէք :

«Et voilà! . . . ինչ որ պիտի բռնինք ը-
սինք : Եւ Յակոբ Բագրատունին վկայ , եթէ
չհաշտուիք ու չբնդունիք մեր պայմանները,
քարը գլխուդ , ամէն բան վերջացած նկա-
տեցէք եւ վերմակը լաւ մը գլխուդ քաշե-
լով քնացէք : Եւ պիտի յանձնարարենք որ ,
ձեր զրական գործերուն յաջողութեան հա-
մար այլ եւս դիմում չընէք այն սուրբերուն
որոնք մեր սեռին կը պատկանին :

Ընդունեցէք մեր ողջները

Չեղ

Տիկին Ս. Ֆիմի

Կատաղի Ֆեմինիստ մը

Փակագիր մէջ . —

Խօսքը մէջերնիս , երբ այս տեսակ բո-
ղոքագիր մը ստանայի , հաւատացէք որ
առանց այլ եւ այլ կիներուն առջեւ պիտի
խոնարհէի :



ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ԵՐԱՆԻԿ “ՄՕՐԵՂԲԱՅՐ,,Ը

Երեկը ձգած թէ երկէն ձգուած, անուրոշ մնար ատիկա. իմացուած էր մինակ որ, երկար ատեն երթեալի մը ունեցած էր դէպի հոն՝ ուր կերթան շատ մը բաղդաւորներ, միանգամ ընդ միշտ նեակելու ամուսնական անտանելի բեռը։ Ու իրաւունքով թէ անիրաւօրէն, յաջողած էր վերջապէս ձեռք ձգելու այն թուղթը որ բացառաբար կը լուծէ՝ զոր Սարգսի զոհեաց մարտի միջնակի նուիրական պատգամը։

Գեղեցիկ ու մանկամարդ գեռ մէկն էր Ան՝ այն կիներէն, որոնք, հակառակ իրենց այրիացած վիճակին, բոլոր հոգեբանին արդուզարդին տուած, բնականը արուեստականին խառնած, ա՛լ աւելի հրապուրիչ բլլալու գաղտնիքը իւրացուցած են իրապէս։ Տնական աշխատանքը ձգած մայրիկին, առտու իրիկուն փողոցի դուռն էր Ան՝ իր գրաւիչ նշանակէն մէջ, ու ցերեկը պատշգամը՝ դիտելու համար, կուշտ ու կուռ, բազմութիւնը բոլոր այն շուկացիներուն, որոնք, սովորութիւն ըրած էին միշտ ատ փողոցէն անցնիլ, հակառակ չիտակ ու կարճ ճամբայ մը չըլլալուն, իրենց կարգին վայելելու համար՝ երկամարդու անյադ աչքերով, մէկ ահնարիկ կամ ժպիտը այդ դուռի կամ պատշգամի անխուսափելի ցուցադրութեան, Գիշերները երբ մութը իր խիտ թանձաբութիւնը տարածած է ամէն զի, ու փողո-

ցի անցուդարձը ալ դադարած, իր ննջասենեակը կը մտնէ Ան, ձեռքը բռնած աշտանակ մը, զոր խնամով կը զետեղէ զարդասեղանին վրայ իր սիրական հայելին առջեւ։ Ննջատենեակը փողոցին վրայ կը նայի և վարագոյրները, ինչպէս ամբողջ ցերեկը, դիշերներն ալ անշարժ կը մնան իրենց կէտբաց վիճակին մէջ, արդարացնելու համար կարծես այդ թարմ էգին բաց-կնիկի անհոգութիւնը։ Հոն կը մնայ Ան, ժամերով, հայելին դիմացը, իր մերկ հրապոյրներուն յաջորդական ցուցադրումին մէջ։ Գիշերուան սոսարաններու այս սովորական, միօրինակ կրկնութիւնը, կասկած չի թողուր փողոցի ցանցառ անցորդներուն, դրացի տուններուն հետաքրքիրներուն գուշակելու թէ՛ գեղանի Տիկինը իր արդուզարդին սկսած է. ամէն անգամ որ լոյսը վառուած կը տեսնուի այդ սենեկին մէջ։ Ու հիմա, փողոցին մէջ, այդ տունի պատշգամին տակէն ծայր կուտայ կանայցի հրապոյրներու սիրահարներուն շարքը, որոնք, մէկը միւսին ետեւէն կանցնին քով քովի՝ մերթ ընդ մերթ նախանձոտ ակնարկներ նետելով իրարու։ Կը դառնան անոնք, նորէն կանցնին տարտամ ու անտառաւի քայլերով. երբեմն երբեմն կանգ առած, մութէն լոյսը դիտելու համար բաց պատուհանի այդ բաց մարմինը որ ա՛լ աւելի քաջող երեւոյթ մը առած է հիմա, դիշերուան այս անիմաստ, աննպատակ արդուզարդին մէջ։

Միջոց մը սենեկէն դուրս դէպի ներս կերթայ Ան, հետը առած լոյսը, մեծ սրբոնեղութեան մը, անհամբեր սպասումի մը մատնելով բոլոր զինքը զիտողները. շատ չի տեսեր սակայն այս սիրտմաշուք ու նորէն կերելի Ան, գլուխը փաթտած անձեռոցի մը մէջ. անուշութիւններու իր լոգանքը կատարեր է. սրբուիլ կսկսի։ Մազերը երեսները, պարանոցը՝ կոյս անտառ՝ յաջորդաբար կենթարկուին այդ երջանիկ սպասին պինդ լղբառութիւն, որ այս չփութի հմայող գինովութենէն թմրած կը նուաղի կիյնայ զինքը չարչրիկ կախարդ մարմինի զոյգ մը սիրուն կըրտութիւններուն վրայ։ Գլխի արագ շարժում մըն ալ և անա սեւ սաթէմաշերու առատ խուրձ մը, գաղաթիլի

վրայէն կը նետուի, կը տարածուի թանձր քօղի մը պէս, իր մթութեան տակ ծածկելով պահ մը խնդեցնող հրապոյրներու սիրալի տեսարանը: Փզոսկրէ սանտր մը դեր առած է հիմա, ու պինդ բռնուած մանկամարդ կնոջ մտտ ափին մէջ, դադարած իշխար անհասնում ելեւէջներով կը ճղէ, կը զատէ թնձուկը, կը փարատէ յորդ մաղերու մութ խաւը, մետաքսի թելերու անջատ, հատիկ հատիկ աղւորութիւնը տալով անոր: Ինչպիսի վեր հակառակ շարժումով մը գեղանի կինը ետին կը նետէ նորէն այդ ծաւալուն թեթեւ զանգուածը, որ վայրկենական սեղմումի տակ կը սրկուի, կը կլորնայ ու կը հանգչի սիրուն պոփէ մը կազմելով գազաթին վրայ: Յետոյ անգամ մըն ալ կը նայի Ան, հայելիին մէջ, աջէն ձախ, ձախէն աջ շարժումներ մը կընէ, թեթեւ հարուածներով կուտայ, շոյանք, փայփայանք մը աւելի, գրծէն դուրս ելած անկարգ թելերուն և գոհունակ դէմք մը կառնէ զարդարանքին լըրացումը աւետող: Ու, միշտ կեցած նոյն այդ բոց սպտուհանին առջեւ, անոգ, անտարբեր փողոցին հետաքրքիր ակնարկներուն, կը հանուի վայրկենաբար, պարանոցին, ուռուցիկ կուրծքին, մտտ թեւերուն ճոխ մերկութիւնը թաղելու սիրական հայելիին մէջ, որ հիմա իր գրկի այդ անբաւ հարստութիւնովը փառացած, նախանձր կը շարժէ այն դժբաղդ սիրահարներուն, որոնք ծաղիկ մը ըլլալ իրենց սիրելիներուն կուրծքին վրայ հանգչի, կամ զեփուտ մը ըլլալ անոնց մաղերուն մէջ թաղալ կը բաղձան: Հայելիին տուտօրէն չափուած այս շնորհներն ալ սակայն կը գտնեն իրենց վերջը վերջապէս եւ իր կարգին՝ դէմք գանուող գեղեցկութիւնէն հրապուրուած այս կինը, ճիշդ ան ողջակներուն պէս, որոնք կը հիւանան իրենց ունեցած խաղալիկներուն վրայ ու չեն ուզեր տալ անոնք իրենց տարեկից փոքրիկներուն, նորէն կը հազուի, աւելի ճոխ զարդարանքով մը և դուրս կընէ սենեկէն, խոր մթութեան մը, տխուր ամայութեան մը մէջ ձգելով բոլոր այն բաները, որոնք իր ներկայութեան սթաճուն ոսկի երազի պերճանքը կազմած էին:

Որո՞ւ համար կը պնտուէր, որո՞ւ համար կը զարդարուէր այս կինը: Ո՞վ էր այն բազ-

դաւոր արարածը, որուն համար գիշեր ցորեկ հաղար նազանքներով կը փայփայէր իր մարմնի թարմութիւնը, անհատնում խնամք կը չափէր միշտ վառ պահելու իր հրապոյրները. գաղանիք մը կը մնար ասիկա, գաղանիք մը որ սակայն պիտի լուծուէր որ մըչէ, որ մը, քանի որ էն անտարբեր, էն առաքինի մարդն անգամ չի կրնար համբերել երկար ատեն, և իր հետաքրքրութեան գոհացումը կուզէ մանաւանդ ասանկ էրիկ չունեցող կնիկներէն:

Ու գաղանիքը կը լուծուէր: Ամէն անգամ որ այդ Աղւոր կնիկը լոյսը առած դուրս կընէր սենեկէն, փողոցին մէկ անկիւնէն ալ կը փրթէր մէկը, երկար վերաբերի մը մէջ փաթուած և անխուսափելիօրէն լապտեր մը բռնած. ու կը յառաջանար այդ մարդը տոտիկ տոտիկ, ափ կառնէր անոր դուռը, թեթեւ թիկ-թակ մը կուտար և այդ դուռը կը բացուէր այնչափ արագ որ, մարդ կը մղուէր մտածել թէ, մանաւոր ժամադրութիւն մը որոշուած էր: Ներս կը մտնէր մարդուկը և դուռը նորէն կը գոցուէր:

Այս անժամանակ այցելութիւնները կը շարունակուէին գրեթէ ամէն գիշեր: Հապտերաւոր մարդը միշտ կուգար ու կերթար Գիշերներու երկարատեւ ժամանցներուն, ցորեկներն ալ կսկսէին քաջորդել և օրական այցելութիւնները. գիշերը ցրեկին խառնուած, երթալով կը շատնային, սա տարբերութիւնով որ գիշերուան լապտերը ցորեկուան պայտատակին փոխուած էր: Ո՞վ էր այդ մարդը, ոչ մէկը կրցած էր ճանչնալ. միայն թէ ամէն անգամ որ այդ կնոջ գրան բաց-խփումը խնայուէր, գիշերները լապտերաւորն է կընէին, ու ցորեկները պայտատկուէր. և ենթադրութիւնը չէր սխալեր միշտ:

Հապտերաւոր կամ պայտատկաւոր մարդը հակառակ իր անհրապոյր առնականութեան հակառակ իր նիւար, հիւանդկախ վիճակին, միշտ ջերմ ընդունելութիւն կը գտնէր այդ տունին մէջ: Ցորեկներու լուսատենի համարձակ այցելութիւնները, միայն կատարուած պայտանքը «Մօրեղբայր» մը կը հանէին մէջտեղ: Այդ մարդը Մօրեղբայրն է եղեր գեղանի կնոջ:

Ու այս Մօրեղբայրը, ե՞՞՞տաք վերաբերութիւն մը չէր ցուցաներ իր քրոջը, դուռնէ շատ կը սրէր անոր աղջիկը ու շատ կերթար անոր:



ՎԱՀԱՆ ԹՕՇԻԿՅԱՆ

ՅԱՆԹԵՋԻ ԿԱՂԱՆԴՉԷՔ

Գրիչս ունացած մեղրով ու կաթով,
 Երբ, ըստ առաջնոյն, այսօր, յանգարով,
 Դադարե մը վերջ, երկաւր, անվերջով,
 Կ'սկսի շարժիլ ձեռքիս մեջ փութով,
 Մինչ արդէն շատեր, արուքէ՛ մասակ,
 Իրենց պակեւով ծրարադեմ, ստակ,
 Չուզելով առնել ըզմեզ ոսքի տակ,
 Պրննած են շրթեղ մեր Հանրապետի,
 Որպեսզի մեր պերն, սիրուն, անուշիկ,
 Ընթերցողներուն ընծայենք յուշիկ,
 Կաղանդի նրուէր մ'աննման ու շիւ,
 Որ գրականօրէն չը հոսի երեխի,
 Ու բուռնմտաւե՛ս պարտեղի մ'հանգոյն,
 Ի նախանձ ծաղկանց անբոյր եւ անգոյն,
 Զինքը վայելող սրտերուն իսկոյն,
 Հըմայք եւ հրապոյր առքէ մեծագոյն,
 Եւ կարգ մը մարդոց, պառկած աջ ու ձախ,
 Ընկել չայ փութով շիշերով քացախ,
 Կը դասեմ . . . ամէն բանէ գեր ի վեր,
 Կաղանդի առքիւ տալ մէյմէկ նրէր,
 Անոնց՝ որ պարզած հոս իրենց բեւեր,
 Հանրապետիս մեջ են հաւաքուեր,
 Թե՛ւ հասակով, կարն, երկայն, միջակ,
 Քայց անուններով մեծ, հանրահռչակ:
 Եւ քանզի ազգերն աշխարհիս բոլոր,

Դաւանած են իբր օրէնք մ'անմոլոր,
 Դասել միտ կիներն ի մէնջ գերազանց
 — Բան մ'որ երբեք չեմ կրնար ընել զանց —
 Կ'սկսիմ նախ տալ անոնց որ են կին
 Իբրը հրապարակ այս մեծ օրէնքին:

* * *

Յօդուածներ տալու համար sur commande,
 Մշակման մը՝ վերան բանուած աղամանդ,
 Առ փերթողութիւն աննման Սէֆէ
 Որուն գրչին իսկ չէ մարք հանդիպիլ:

—

Վե՛լ մը՝ փարթամ եւ պերճաբանդակ,
 Մշակի ափերն զգուռը բովանդակ,
 Որուն բոյներէն սոխակներ խօսին,
 Զբնաղ հովուերգու, վե՛ն Առաջինին:

—

Վայելին հարսնութեան զաւկին սիրասուն,
 — Այժմ պակեւանող մանկանց գիրգ դասուն —
 Որպեսզի մօրկան իր կարօտն ըմպէ,
 Առ տաղանդաւորն անգին Եւրօպէին:

—

Զմբան մեջ վարդ մը՝ ծաղկանց են յարգին,
 Գարնան մեջ ապրող Հայկանոյ Մարտին:

—

Մօթե՛՛ն մը ընթիւ մամուլ միասին ,
Բաշխելով չորս դին , շուս , հաւալութիւն ,
Իր Մանգրուկներն լուրով նքումարիս ,
Առ մեր Գայսերեան էֆենտին Յերիս :

Մասեմադարան մը՝ հոխ ու բեղուն ,
Անբա՛ւ , անապա՛ն , պաշարով զեղուն ,
Պրննելու համար իր գրական Տարին ,
Սիրուած բանասեր Հ. Սասունին :

Նժոյց մը վազող զերդ առիւծ , ապա՛ն ,
Առ մեր տաղաչափն անգին Աշխատան :

Տեղական վեպի նիւթ մը ապագայ ,
Որ «Ոսկիներուն ճամբան» կտէ , զայ ,
Յուզիչ պատկերով , հոխ , բազմասեսակ ,
Առ Բասիմ եւ կամ Դոյունեան Միսաֆ :

Ձեռագրի փայլուն բուրբեր քայիսակ ,
Տեր-Անդրեասեան երուանդին ասակ ,
Դրեելու համար լուրեր Արսաֆին ,
Ձմեռուան ցուրտին , ամառուան տափին :

Իր բառարանին լման աղագաւ ,
Յոգնած աչերուն , ահնոյ մը *soléil* ,
Որ ցոյց տայ բառերն յսակ ու մեկին ,
Տրքնո՛ղ , չարչարուող ժիր Թեոդիկին :

Սառա Պեռնարին աչերեկն մի էի ,
Ե. Դոյունեանին , ալեհարկ մ'ամսիչ :

Դրիչ մը ոսկի , սրածայր , նրբին ,
Մեր Տեր-Յակոբեան եղբայր Յակոբին :

Չախմախմախի վրան ուղղածից ,
Մեծ վաճառատուն մ'ուր է՛ն ընթացիկ ,
Ապրանաց վրայ գործէ խելացի ,
Առ (Ս. Չեմլիֆեան), Ժ. Շիրակացի :

Ուսանողութեան ընթացք մը յաջող ,
Բժիշկ քլալու գործին մեջ տանջող ,
Կախելու համար *shiraz* մ'իւր ուտեն ,
Առ Տ. Գասպեան , վաղը *médecin* :

Սիւրին մեջ հաստատ մի հոխ անկողին ,
Մեր Լոուիսիանեան մեծ Բաւագոդին :

... Իդներուն լուսն Հօրմէն երկնաւոր ,
Առ (Ջաւան Մոյրեան), կամ Յ. Ազնաւոր :

Աներ մը հարուստ , բիշ մ'ալ ալեխառ ,
Կարուածի տէր մարդ , լեզուով անբարբառ ,
Արտադրող հասոյք մ'ալ ամեն ամիս ,
Լեւոն Շարեան... խեղճ բարեկամիս :



ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

(ԼԻԼԱ)

ՔՐՈՆԻԿ

Խնչ աղուոր դիմակ մ'է սա վերնագիրը՝ որուն տակ հատորներ կրնայ պարարելու։ Carte blanche մըն է քրոնիկը որով ամէն նիւթի մէջ կրնաս մտնալ։ Passe partout մը աւելի, որով ամէն դուռ կրնաս բանալ, վերջապէս entêteներու formuleն է ան, որուն ներքեւ ամէն բան կրնաս ըսել, ամէն գաղափար կրնաս պարզել, պարփանալ որ զայն չարաչար չգործածես ու entêteիդ տպաւինելով... entête չընես ընթերցողը։

Արդ Հանրագիտակի առաջին թիւով որ կը հրատարակուի զուգադիպաբար տարւոյն անդրանիկ օրին, ամբողջ երեք հարիւր վաթսուհե հինգ սահող օրերուն resuméն

հոս խառնելու համար սա փրկարար ֆունկի վերնագիրէն զտա բաւ մը չէի կրնար զնել խուսափելու համար banal ու ծխած խորագիրներէն, ինչպէս «Կաղանդի գիշերը», «Հարուստն ու աղքատը», «Վերջացող տարին», «Նորածին տարին», «Ակնարկ մը դէպի ետ» and so for:

Նախ սունենք դրական հրապարակը՝ որուն օրուան արժէքը բանական է ալ (i) Ելլալը փորձառարար հաստատողներ չպակսեցան մեզ դրացի Իգմիրի մէջ ու չորս ոտքով վազեցին փարիլ անոր։ N'est-ce pas vrai? mon ami Pierrot:

1904 տարին կարծես բանաստեղծներու

periodeը եղաւ, քանի որ այդ օրերուն ունեցանք սիրուն հատորիկներ, որոնց մէջը թէ դուրսը ոչինչ կը պակտէր բացի... նուե՛ր կաղանկի վերտառութենէն այնքան շիւք, այնքան *présentable* էին... կաղմի եւ տպագրութեան կրկնակ տեսակէտներով:

Օրաթերթերը չկրնալով ամփոփուիլ իրենց առօրեայ լուրերու բաժնին մէջ, պարբերականներու հացը խել փորձեցին անոնց բովանդակութիւնը կեղծելով իրենց շարաթի թիւերուն մէջ, ալքատի մը ողորմութեան՝ տասնոցի մը փոխան: *Concurrence? ou bien trop de zell!* ես ալ չեմ գիտեր:

Հապա օրացոյցներու տեղատարափը... Տարեցոյցի առաջին հրատարակութենէն մինչեւ անցնալ տարի քիչ շատ իր նպատակին հասնող հատորներ ունեցանք, բայց այս տարի, նորութիւնը մանաւանդ *exantricitén* այնքան յաւաճ գնաց որ Օրացոյցը յօդուածացոյցի էն լաթձր *grade*ին հասաւ, այնպէս որ ժողովուրդը Որդւոց Որոտման տօնին քով բանաստեղծութիւն մը, եւ ձիւնաբեր հողմունքին մօտ... նորալէպ մը գտաւ: Չեմ գիտեր թէ այս նորահար եւ անըսողիւս զաղափարը յղացողներ քաջալերուած պիտի զգա՞ն ինքզինքնին ալ աւելի թեթեւ հրատարակութիւններ նետելով ժողովուրդին երեսին, մնոր քթին խնդալու սին զաղափարականով: Կ'երեւի թէ *il faut le dire*, հանրութիւնը յօդուածէ զգուած ըլլալուն, Տարեցոյցի պատրուակին տակ զանոնք կ'լեցնել կ'ուզուի:

Իրական շահը ուղղամտութեան մէջն է, եւ ոչ թէ թեթեւ ձեռնածութեան: *A bone intendatore poche parole!*

Իսկ գալով կիներու հարցին, պէտք է ըսել որ այս տարի էն նշանաւոր թուալէթը կրեցին մանաւանդ ձմեռամուտէն ի վեր:

Գրականութեան մէջ հովուերգութիւնը ունէինք, կանացի հաղուստներու մէջ ալ հովուութիւնը ունեցանք:

Կիները հովիւ... որոնց առջեւ փոխան ոչխարի համայն՝ մարդկութիւնը կը քշուէր, կը տարուէր անկէ: 1904ի նորագիւտ մուշտակածիւ բալթօները տեսաք հարկաւ, ձիւդ հովիւներու կռնակը ծածկող մօրթերուն պէս:

Կինը ամէն առաւելութիւն կը վայելէր արդէն, բայց այսօր հովիւի մուշտակը հազաւ որպէս զի իր մոգական սրինգին ձայնէն մարդիկ հմայուին, թմրին ու ինք միահեծան վարէ զանոնք:

Հաւատեցէք սա կիները սոսկալի եղան... սարսափելի:

Գալով ամուսնական հարցին, ուրախ եմ յայտարարելու թէ 1904 տարին բեղմնաւոր եւ արգասաւոր եղաւ, վկայ Գատրիարքարա-

նի տոմարներ եւ «Մանգումէ»ի Արձանագրութեանց բաժինը:

Բոլոր յուսահատ եւ անամնաց օրիորդները տեղաւորուեցան եւ այս յաջողութիւնը երիտասարդներու ալ ժպտեցաւ քանի որ հրապարակէն բաւական քաշուեցաւ պօնոներու տեղատարափը:

Խիչացի շուտիկ խանութպաններ, փոխանակ անանկութեան ամուսնութիւն հռչակեցին եւ ահա այս փրկարար սխիւէմով կըրցան տունը՝ կիւնով, խանութի ալ ապրանքով փրկել: Բայց... խնդիր է թէ կինը իր նետ բերածովը արդէն ի ձեռին դառնաւ ալ չհալեցնէ... Դեռափթիթ ամուսիններու ուշն ու ուրուշը կը հրաւիրենք այս առթիւ:

Ամուսնական *paragraphe*ին մէջ յիշենք նաեւ ամբողջ 1904 տարւոյն մէջ պատահած ընտանեկան փոթորիկները որոնց յուզումը դրամով եւ հանդարտութիւնն ալ ճռաւով վերջացաւ, օրինակ Հալքի մէջ անձնասպան թօտուաքին, ու Սամաթիացի կղեմէսը:

Սալօնի կեանքին վրայ խօսելով, կրնամ ըսել թէ վերջացող տարին էն փայլունը եղաւ ոչ թէ շիւխի, ճօխութեան տեսակէտով, այլ՝ իր կատարելութեան հասնող *profek*ին առթիւ:

Գալով երաժշտականին, կրնանք ըսել թէ 1904 տարին մէջ մանսօշիկն ընդհանուր փափաք մը նշմարուեցաւ մանաւանդ օրիորդներու մօտ:

Ժամանակ մը դաշնալի էր՝ այսօր մանգուրինը. կ'երեւայ թէ արդի օրիորդութիւնը (երիտասարդութիւնը կ'ըլլայ օրիորդութիւնը ինչո՞ւ չըլլայ...) աղիքները խանգարող իրենց ամուսնական անյաջող խնդիրը յուզելու համար՝ երկաթէ լարուած թիւերը ընտրած են այս անգամ, որոնց վրայ կ'ողբան իրենց անամնացի սէսէնատները ի լուր երիտասարդութեան: Նուագէ մը աւելի կոչ մը, սըրտայոյղ հրաւեր մը ընել ուղեկով գոգցուս անոնց սրտին, որոյ մինչեւ հիմա ուրիշ ամէն միջոց ապարդիւն մնացած էր:

Ուստի ըստ նորագոյն եւ դարաւերջիկ սխիւէմին աղայ մը սիրաշահելու համար մօրը կողմէն մանսօշիկն չեղիւմէ իսկ աղջկանը կողմէն մանսօշիկն սեռեկանս...

Առաջինը կէսրոջ, իսկ երկրորդը բուն տիրոջ սիրտը առնելու չափ անուշ...:

Si none bene, ben trovato.

Դեռ շատ բաներ ըսել ձեզի թէեւ ինծի մնծ պարտք էր, սակայն աւաղ տեղ չի թողուց սա անարժան իմ պատկեր:

Արտագրութիւն ԱՐՄԷՆ ԼՈՒՍԵՆՅԱՆ

Տպագրութիւն Մ. ՍԱՐԵԱՆ

Պապ.Ալի Խաւսէտի Ն. 28

